



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a traditional marbled paper pattern, often called a 'stone' or 'shell' pattern, featuring irregular, rounded shapes in shades of brown, tan, and black. The spine of the book, visible on the left, is bound in a dark, possibly reddish-brown, leather. A small, rectangular, cream-colored paper label is affixed to the lower-left corner of the cover. The label has a thin black border and contains handwritten text in blue ink. The text is arranged in two lines: the first line reads 'L6n' followed by a horizontal line, and the second line reads '129'.

L6n
129

1999

18

18

18

18

Հ. Կ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՄՈԼՈՒԹԵԱՆ ՄԸ
ԶՈՀԵՐԸ

ԽՄԲԱԳՐԵԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՄԲ
ՊՍՐԶՍՄԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



807



ՀԱՄԱՆԱՒ ՄԷՍՐԻՅԻ

Կ. ՊՈՒԽՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՄԱՂԵԱՆ

1880



Ս.Ռ. ՍԶՆՈՒՍՄԵԾՍԻ

ՏԻԳՐԱՆ ԷՑ. ԿԻՒՄԻՏԿԵՐՏԱՆ

ՉՕՆ

ՄԵՏԻ ՀԻՍՅՄԱՆ ԵՒ ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՍՅ

Յ՝ ԵՐԱԽՏԱԳԷՏ ՄՐՏԷ

ՀԵՂԵՆՍԿԵՆ

29. 135

129-60



Այս գիրքս յառաջարանի պետք չունի . զի
ինքն ընկերականութեան մէջ գտնուող շատ
մի մտութեանց ու թշուառութեանց յառա-
ջարանն է արդէն :

Ուստի , ընթերցողացս ներպղամտութեանն
ու քաջալերութեանն վստահելով կը հրատա-
րակեմ :

ՀԱՄԲՈՒՐՉՈՒՄ Կ. ՍՄԱՏՈՒՆԻ

1880 սեպտեմբեր 5

Սամաթիա

Իրարանցիւր օրինակ պէտք է Պարզասէր
Հայու հետց Աշխերութեան կնիքն կրէ :



ԿԻՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԻ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆՆ Է :

ԳԼՈՒԽ Ա.

Գիտութիւն , լոյս , յառաջդիմութիւն , քա-
ղաքակրթութիւն ազազականերն թնդացուցին
մթնոլորտն . ամեն բերան զայն յեղյեղեց . ա-
տենարանն , կզերն իրենց բեմերէն . հրապա-
րակագիր պաշտօնեայն իւր թերթերու միջո-
ցաւ , դաստիարակն իւր դասերովն ուսուցին և
քարոզեցին գիտութեան օգուտները , յառաջ
բերած բարիքները և ցոյց տուին զայն իբր
միջոց մարդկային երջանկութեան , ուսուցին
առ հասարակ ամենքն թէ մարդս իբր էակ
եռակի երեք տեսակ զարգացման ենթակայ
է . մարմնաւոր , մտաւոր և բարոյական թէ
անհրաժեշտ հարկ մի է սոյն եռակի գոյացու-
թեանց տարերքն բեղմնաւորել , արգիւնաւո-
րել , մշակել . որպէս զի կարող ըլլան մարմինն

միտքն և հոգին միանգամայն գտնել իրենց սնունդն և այսու կարելի ըլլայ անհատական և հետեւաբար հանրային կենաց երջանկութիւնը :

Սակայն ի զ՛ւր հնչեցին այդ ազազակներն , ի զ՛ւր արձագանգ տունն ատենաբանից ձայներն ընդունայն օդոյն մէջ , ի զ՛ւր խմբագրութեան այդ գրեանքն , ի զ՛ւր ճգնեցան դաստիարակք ուսուցանել և բարեքել անհատից մարմնաւոր , մտաւոր և բարոյական վիճակն , քանի որ չարտագրեցին նշանաւոր արդիւնք մի անհատական կենաց վերայ : Զի գողցես ամեն յառաջդիմական շարժում իսկ և իսկ կ'ընդունէր իրեն ընդդիմագործ զօրութիւն մի , որով զօրաթափ կը լինին ամենէն կորուվամիտ և քաջասիրտ էակներն որք յառաջագոյն կատարելութեան , յարատեւութեան և յաջողութեան մեծ երաջխաւորութիւն և ակնկալութիւն կը ներշնչէին . շատ բնական էր այս . քանի որ դիտութեան ջահն լուսաւորած էր ընկերական մարմնոյն մի փոքրիկ մասն , այլ մեծագոյնն և կարեւորագոյնն մնայր դեպերէր ի խաւարի . տղիտութիւնն , նախապաշարումներն , ներկային ետութիւնն ահագին պտտնէշներ էին բարձրացուցած սոյն երկու մասանց մէջ և բնական էր հետեւեցնել թէ պայքար մի յառաջ պիտի գայր :

Սակայն սոյն ընդդիմագործ զօրութիւնն խորտակելոյ համար հարկ չէր մաքառիլ , կռուիլ . այլ համոզել , ռամկացնել դիտութիւնն և ամենուն մտացն հպելի ընել և առ ժամայն կը դադրէին ամենայն վէճք և հակառակութիւնք : Ս.յլ կը ցաւիմք ըսել թէ այդ ամեն միջոցներն դրեթէ զուրկ էին այս պայմաններէն , որով գործոյն յաջողութիւնը վտանգի ներքև կը դրնէին . թէև չեմք ըսեր թէ այդ ամեն ազազակներն ճիգերն ու աշխատութիւններն բոլովին անօգուտ էին . զի ամեն անգամ որ կը լսէր և կը տեսնէր այդ ազազակներն ու շարժումներն , նոր ցունց մի կ'առնոյր , եռանդով և աշխուժիւ կը համակուէր գործադիր պաշտօնէութիւնն . ընկերական շարժման այդ մեքենավարն նոր զարկ մի կը տայր , այլ մեքենայն չէր շարժէր . յայտնի կը նշմարուէր , սր կարեւորագոյն մասն կը պակասէր և հարկ էր նախ այդ պակասն յրացնել , որպէս զի ներդաշնակօրէն շարժէին և յառաջ երթային յառաջդիմութեան անիւներն . այս , ընկերական կարևոր տարրն դեռ կը մնայր ՚ի խաւարի , մինչդեռ արական սեռն ռակաւ առ տակաւ կը յառաջանայր դէպ ի լոյս , դէպ ի գիտութիւն . իգական սեռն անշարժ կեցած էր իւր հինաւուրց տղիտութեան մէջ , կինն անդէտ էր իւր կոչման մեծութեանը ու վսեմութեա-

նը , առանձնացած ընտանեկան անձուկ վայ-
 թին մէջ , մարդկային ընկերակցութեանն ան-
 հաղորդ , անդէտ իւր գերիշխանութեան կը
 ճանչէր զինքն իբր գերի առն կամաց և իբր
 գործի զգայական հաճոյից . տարօրինակ ապ-
 շութեամբ կը դիտէր այն շարժումներն և կը
 լսէր այն աղաղակներն ու գոչիւններն որք ըն-
 կերային միջնորդան կը ցնցէին . սակայն ար-
 ձագանգ չ'ունէին ընտանեկան յարկաց մէջ .
 ամեն անգամ որ կինն ի բացէ կը լսէր այն ա-
 ղաղակներն հեզնական մի ժպիտ , մի քրքիջ
 կ'արձակէր և փոքր ինչ կ'երկնչէր . զի այնպէս
 կը կարծէր թէ այն ամեն շարժումներն իւր
 գոյութեանն վտանգ կ'սպառնան , թէ հարկ
 է արդիւել այդ շարժումներն : Աստ էր իւր
 կուրութիւնն , տգիտութիւնն . ուստի պէտք
 էր ճանչցնել , ուսուցանել նմա թէ , ընկերա-
 յին լուսաւորութեան համար եղած բոլոր աշ-
 խատութիւններն յօգուտ իւր անձին են , թէ
 որչափ յառաջանայ աշխարհս դէպ ի քաղա-
 քակրթութիւն , այնքան պիտի բարձրանայ կոռ-
 պատիւն . մարդկային ազգի յառաջդիմութեան
 աստիճանն կը ցուցնէ այն բարձրութիւնն որոյ
 վերայ դրուած է կոռ-պատիւն : Ուստի ինքն
 ալ պէտք է շնորհէ իւր աշակցութիւնն , օժան-
 դակութիւնն , ազդու ներդրութիւնն , նպաս-
 տէ հանրային շարժման . առանց որոյ անհը-

նար է իրական յաջողութիւն մի յառաջ գալ :
 անհնար է լուծել դաստիարակութեան խըն-
 դիրն , անհնար է յեղափոխել , ազնուացնել
 ժողովրդեան բարքն , անհետացնել ժողովր-
 դեան մէջ տիրած մոլութիւններն , արմա-
 տախիլ ընել սրտերու մէջ ցանուած անբա-
 լոյականութեան սերմն . առ այս չեն բաւա-
 կան ո՛չ կրթական հաստատութիւնք , ո՛չ հը-
 բապարակային քարոզութիւնք , պէտք է յա-
 ւելուլ այս միջոցներու վերայ , լաւագոյնն և
 ընտրելագոյնն , այն է ընտանեկան դաստիա-
 րակութիւնն . զի ընտանեկան յարկին ներքե
 կուսանի տղայ մարդն , կը զարգանայ մարմնա-
 ւորապէս , մտաւորապէս և բարոյապէս , հոն
 կ'ստանայ ճշմարտին , բարւոյն , գեղեցկին ճա-
 շակն . ընտանեկան սրբազան վեհավայրին մէջ
 կ'առնու իւր նախնական ուսումն , և ինչ որ
 հոն կուսանի , հիմնական է այն և անջնջելի ,
 զի մօր խնամներով և կենդանի օրինակներով
 կը տպաւորի իւր սրտին և մտքին մէջ :

Բնութիւնն շնորհած է կոռ-պատիւնն և
 բարձր պաշտօնն և ո՛չ որ կարող է կապտել
 զայն ի նմանէ , և եթէ ինքն կոյր և անդէտ է
 իւր էութեան , և յերկնուստ ընդունած պաշ-
 տօնն փոխանակ հասարակաց բարւոյն համար
 գործածելու , մարդկութիւնը կրթելու և յա-
 ռաջացնելու , իրաբուն չարիք սերմանելու կը

յատկացնէ , և յետադիմութեան պատճառ
կը լինի . պէտք է լուսաւորել կինն և ճանչը-
նել իւր սլաշածնն , որպէս զի բարեկարգին ըն-
տանիքներն և կարելի ըլլայ մարդկային ազգի
քաղաքակրթութիւնն :

ԳԼՈՒԽ Բ.

Ընտանիքներն են ազգի մը կենդանի հայե-
լին , յորում կրնա՞նք տեսնել ազգին նիւթա-
կան , մտաւորական և բարոյական վիճակն .
հոն կը ձևակերպի ազգի մը ճակատագիրն ,
հոն է իւր ուժի կեդրոնն , բարգաւաճման ար-
դասաւորութեան ազրիւնն :

Ընտանեաց ամբողջութիւնն է ազգի մը ըն-
կերակցութիւնն , որոյ տարերքն կը կազմեն
ընտանիքներն , որք որչափ լաւ կազմակերպ-
եալ լինին այնչափ լաւ մտունդ կառնու և հա-
ճի ազգային ամբողջ զանգուածն . ինչպէս մար-
մնոյ մի առողջութիւնն կախեալ է իւր անդա-
մնոյ կազմութենէն և զործարանաց ներդաշ-
նակ յորինուածքէն . և եթէ վրաս մի խօթու-
թիւն մի պատճառի մի մասին , հետուանքն կը
ծանրանայ ամբողջ մարմնոյն վերայ . այսպէս
ալ ազգի մը վերայ կը ծանրանայ աղէտքն և
թէ ընտանիք մի կորուսէ իւր արժանապատ-
ուութիւնն , չ'կատարէ իւր պարտաւորութիւնքն
զորս բնութիւնն սահմանած է և յատկացու-
ցած այդ սրբազան յարկին . որոյ աճման հան-
գրստութեան և երջանկութեան համար բնու-
թիւնն շնորհած է հաճոյքներ ամեն կարգի ըն-
տանեաց հաւատարապէս . բայց ընդ նմին
պարտքեր ալ կցած այդ հաճոյից՝ որոյ լրումն

է հաճոյից յարատեութիւնն , երաշխաւորութիւնն և ապահովութիւնն . եթէ պարտուց զանցառութեամբ ուզէ ընտանիք մը երջանիկ լինիլ , սանձարձակ ազատութեամբ ապրիլ , իւր անդամոց թշուառութեան ապերձանկութեան պատճառ կը լինի և դառն պտուղը կը քաղէ վաղ կամ անագան ինչպէս պիտի տեսնուի գործոյ շարունակութեան մէջ :

Ընտանիք մը պէտք է առաքինութեան , պարկեշտութեան , համեստութեան , մարդասիրական , բարեսիրական զգացմանց տեսարան մի ընծայէ իւր նմանեաց . բարի օրինակ հանդիսանայ , պատկառելի և ակնածելի դիրք մը առնու յաչս ժողովրդեան և ստիպէ անհատներն համակերպիլ իւր ուղղութեան , իսկ եթէ ընդհակառակն ամբարշտ վարուց շռայլ կենաց հետեւելով՝ մոլութեանց և աւերմանց թատր մի կը հանդիսանայ , իսկոյն իւր օրինակն կը տարածուի , կը ծաւալի և ուրիշ ընտանեաց զեղծմանց և բարոյական աւերմանց պատճառ կը լինի :

Ոչ ոք կրնայ հաշուել թէ օրինակ մի ո՛ւր իւր սկիզբն կառնու և ո՛ւր կը վերջանայ :

Ամեն անգամ որ ընտանիք մը կը փլի , ընտանիք մը կը կործանի , կը փլասի իսկոյն այն ամբողջութիւնն որոյ մասն կը կազմէ այդ ընտանիքն . ըստ որում ո և է ընտանիք հարուստ

կամ աղքատ , նշանաւոր կամ աննշան երբ իւր գոյութեան , բարեկեցութեան , պատուոյն հոգ և խնամք կը տանի և խնայողութեամբ , ուշիմութեամբ , խոհեմութեամբ ապրելով զինքն կազմող անդամոց կատարելապէս աճման , կրթութեան , երջանկութեան աշխատելու պարտաւորութիւնն կը կատարէ , օգտակար և կարեւոր անգամ մի է Ազգին ամբողջութեան :

Երբ այս կերպով ընտանիք մը գոյութիւնն կ'ապահովէ , այն ատեն ընտանեաց սահմանէն դուրս ալ կրնայ գործել , մարդասիրական , ընկերայնութեան ասպարէզ մի կունենայ իւր առաջ :

Քանի՛ երջանիկ բարերազգէն այն ազգերը՝ որ այսօրինակ ընտանիքներէ բաղկացեալ են , որք զիտեն իմաստութեամբ անօրինել կարգադրել իրենց գործերն , բնական և բարոյական օրինաց համեմատ ստանալ իրենց վիճակն , զիտեն նիւթական պիտոյից սահմանն ըստ կարելոյն չափաւորել , միշտ կարեւորին և անհրաժեշտին ուշ դնելով , ապագայն կանխատեսելով՝ ժամանակին պահանջումներն ՚ի նկատի առնելով , զիպաց և պարագայից յարուցած տագնապներն նախատեսելով , ըստ այնմ իրեն կենաց ուղղութիւնն կը գծեն . դժբա հաստատ և անկորնչելի վիճակ մի կ'ստանան , միշտ կը բարձրանան , կը փառաւորուին ,

708

ժամանակին հոսանաց առաջ հաստատ չէնքեր
 կը կանգնեն , զորս չ'կարեն կործանել ո՛չ շըղ-
 թայաղերծ փոթորիկք , ո՛չ ալիք ամեհիք , ո՛չ
 բուռն տաղնապը և ո՛չ մի ինչ զօրեն յարձա-
 կիլ այդ խաղաղ երջանիկ ընտանեաց վերայ
 և զանոնք տապալել : Ար փայլին ընկերային
 Աշխարհի հորիզոնին վերայ , իբր մի աստղ ճա-
 ճանչաւէս սրոյ լոյսն կը ցոլանայ ընդհանուր
 մարդկութեան վերայ , կառաջնորդէ իրեն
 տկար քայլերն տգիտութեան ժեռուտ ճանա-
 պարհէն դէպ ի գիտութիւն . աստղ փրկու-
 թեան որ կը օխուէ իւր լոյսն յաւէտ փրկելոյ
 և լուսաւորելոյ համար մարդկութիւնն , ան-
 երկիւղ տնվտանգ կը լրացնէ իւր ընթացքն ,
 ո՛չ ստորերկրեայ մթութիւնն , ո՛չ մուլութեանց
 խաւարակուռ դէպն կ'ահաբեկեն զանոնք ,
 կ'ապրին ազգութեան , մարդկութեան պար-
 տիկին մէջ , կը ծաղկին գեղարոյր և իրենց
 հեշտահամ պտուղներն կ'ընծայեն սնուցանե-
 լոյ համար տկար մարդկութիւնն . քանի՛ քաղցր
 է այսպիսի ընտանիքի մը հովանաւորութեան
 ներքեւ ծնիլ , նորա ծոցոյն մէջ սնանիլ , վայե-
 լել նորա խնամքը , հոն դաստիարակուիլ , ըն-
 դունիլ ծնողաց սիրալիք գգուանքը , նորա
 գրկաց մէջ ապաստանիլ , գորովական արտաս-
 ուաց մէջ մոռնալ ամեն վիշտ և տառապանք ,
 ասա կենաց հեշտութիւններէն քաղցրութիւնն

րէն մին . ուր օգտաւէտ զբօսանաց և հաճոյից մէջ
 կրնայ անցնել մարդ իւր կենաց զուարթ օրերը :
 Ար գեղեցիկ է տեսնել մայր մի՛ որ իր դա-
 ւակը ծնդացը վերայ առած՝ նորա մատաղ
 սրտին մէջ կը տպաւորէ բարոյականի սկզբունք-
 ներն . բնական օրինաց համեմատ կը հսկէ
 մարմնաւոր աճման . առոյգ , կորովի և զօրա-
 ւոր կազմ մի կը տայ , անդուլ կ'աշխատի նո-
 բա մտաւոր զարգացման և այսպէս կ'ընծայէ
 զայն մարդկութեան , դնելով մի այնպիսի վի-
 ճակի մէջ՝ որով կ'ստանայ ընդունակութիւն
 գիտութեանց և արհեստից , կը բարձրանայ
 ընկերային աշխարհի մէջ և հարստութեան գանձ
 մի կը լինի մարդկութեան , փա՛ռք և պատիւ
 ծնողաց , իւր ձայնն կը սլանայ մինչև իսկ քա-
 զաքական խնդրոց մէջ և կազդէ կը ներգործէ
 հանրային խնդրոց վերայ իւր անհատական և
 Ազգային շահերն կը պաշտպանէ , այսպէս կըն-
 դարձակի և կ'ընդլայնի ընտանեաց ազդեցու-
 թիւն . զի ընտանիքն ուրիշ բան չէ , այլ բնա-
 կան ընկերակցութիւն մի , ուսկից կազմեալ է
 քաղաքական ընկերակցութիւնն :

Ըստ այսմ երբ մեք կը խօսիմք ընտանեկան
 կենաց վերայ , ամենէն մեծ և կարևոր խըն-
 դրոյն վերայ կուզեմք դարձնել ամենուն ու-
 շաղբութիւնը . զի ընտանիքն ընկերային մեծ
 և նախնական խնդիրն է :

Այո՛, ամենէն մեծ խնդիրն է ընտանեկան հարցն և արժանի ամենաբարձր կարևորութեան . և պէտք էր որ աւելի ուշադրութիւն գրաւէր :

Սակայն ցաւալի է ըսել որ ամեն ազգի մէջ ամեն կարգի ընկերականութեան մէջ նուազ խօսուած է այս նիւթիս վերայ և գրեթէ ամեն ուրեք մեծ աշխատութիւն մի չէ եղած ընտանեկան յարկին մէջ բարւոքումներ ներմուծելու, և իւր քաղաքակրթութեան, մարդկային բարուց վերայ ունեցած ազդեցութեան և յառաջդիմութեան մէջ իւր ունեցած վնաս պաշտօնին և կոչման համապատասխանող գրից մէջ դնելու համար մեծ ջանք մի չէ եղած . ո՛չ քաղաքական և մանաւանդ ազգային օրէնքներն այս մասին զոհացուցիչ պայմաններ, արամադրութիւններ, յօդուածներ կը պարունակեն իրենց մէջ, և մինչև իսկ մեծամեծ օրէնագիրներ նոյն ինքն կրօնից հեղինակներ ոչ այնքան յարգանք և համակրութեամբ խօսած են այս նիւթիս վերայ . իրենց օրինաց մէջ կը տեսնուին մի քանի կարճ պարբերութիւններ և ոչինչ աւելի :

Մինչդեռ օրէնքն այսպէս անպաշտպան, անխնամ կը թողու այս նոյն իրական յարկերն,

միւս կողմէն ընկերային բազմադիմի մուլտիպլիք կը յարձակին ; ներս կը խուժեն այդ յարկաց սեմերէն և անխնայ կը զոհեն , կ'ապականեն , կը կործանեն զայնս . և ճշմարտան ըսելով այս մասին մեծամեծ աշխատութիւններ ճիգեր չեն ինայուած , մեծ ջանքեր կը լինին առաջին մարդկութեան այդ սրբազան որորանն պղծելոյ համար . խել մի անբարոյական գրեանք , թատրերգութիւնք , վիպասանական գրուածք , վատթար և ապականիչ սովորութիւնք , բնական և բարոյական օրինաց զանցառութիւնք , անընդհատ հարուածներ կը տեղան և կը ճգնին խաթարել բնական և բարոյական կարգերն . աղէտքներն կը բազմապատկին , ընտանեաց մէջ գժտութիւններ յարուցանելոյ առիթներ կ'ստեղծեն , ամուսնոց մէջ վէճերու և կռիւներու տեղի կը տան , հուսկ ուրեմն բաժանման կ'առաջնորդեն :

Օրինաց պաշտօնեայն՝ որոյ պարան էր միշտ հսկել հասարակաց բարւոյն , արդելուլ պատճառներն , որք կը խանդարեն և կ'եղծանեն բարբերն . և պատժել խանդարիչներն , մեղապարաններն յօրինակ այլոց :

Սակայն ցաւալի է ըսել որ այսպիսի կենսական խնդրոյ մի համար չունի մասնաւոր պայմաններ , կատարեալ օրէնքներ , ինքն որ միանգամայն դատելոյ պաշտօն ունի և շատ ան-

դամ ամենափափուկ խնդիրներ իւր խղճին և արդարասիրութեան վճիռներուն կը յանձնուին , թէ հարցուի իրեն թէ օրինաց ո՞ր յօդուածին համեմատ այս ինչ խնդիրն այս կերպ վճուուեցաւ . ըութիւնը պիտի ըլլայ պատասխանը կամ ընդունայն արդարացուցման մի ճիգ : Աւելորդ է ըսել թէ ընդհանուր դժգոհութեան պատճառներէն մին է այս՝ որոյ թարգմանն լինիլ ուղեցինք աստ :

Սակայն կայ աւելի վտանգաւոր և ցաւալի մի կէտ , այն է թէ շատ անգամ այս փափուկ պաշտօններն կը յանձնուին այն կարգի անձանց որք անգէտ են ընտանեկան դաղանեաց, անձանօթ իրեր են և թերեւս դոյութիւն չունին իրենց համար ընտանեկան կեանքն և իր օրէնքներն , կ'երկնչին , չեն համարձակիր դատերն լաւ մի քննել , իրաց խորն թափանցել , զի մի գուցէ ԱՆԱԽՈՐԺ ԲԱՌԵՐ հնչէ իրենց ականջին և իրենց սրբութիւնը , համեստութիւնը վերաւորէ :

Ի՞նչ բարւոքում պէտք է սպասել այսպիսի պաշտօնեայներէ . կատարեալ օրէնքներ , զորս չ'հաստատելով , ընտանեկան աղէտից կործանման տեղի կը տան :

Ակներև կը տեսնուի որ կարևորութիւն , յարգ , նախապատուութիւն չէ ընծայուած այս խնդրոյն , որոյ ծանր հետևանքներն թուե-

լոյ ոչ յօժարութիւն և միջոց ունիմք այժմ . միայն օրինաց հաստատութեան և կատարելութեան պէտքն ցոյց տուինք . մեք վստահեմք որ արդի պաշտօնէութիւնը , ինքն ալ զգացած է այս կէտը և ինքն նախընթացն պիտի լինի այս խնդրոյն մէջ , օրէնքներ պիտի հաստատէ փորձ և հմուտ անձանց ձեռօք կամ խորհրդակցութեամբ , որպէս զի պակաս մի լրանայ և հանուրց երախտագիտութեան արժանանայ :

Այս փոքրիկ դիտողութիւնս աստանօր ընելով , կը շարունակեմք մեք մեր նկարագիրն ընել , և հայ ընտանեաց կործանման և թըլուառութեան պատճառներն ցոյց տալ : Սակայն կանխաւ կը յայտարարեմք որ մեր սոյն համառօտ գործոյն մէջ , չ'պիտի կարենամք ընդարձակել մեր տեսութիւններն և ամբողջ Հայ ազգութիւնն կազմող ընտանեաց նկարագիրն ընել . մասնաւորապէս մեր տեսութեան սուարկայ պիտի լինի կէս քաղաքակրթեալ երկիրներու մէջ բնակող Հայ ընտանեաց գլխաւոր մտլութիւնն որ թերի քաղաքակրթութեան և տգիտութեան արգասիք է : ցոյց տալ այս շարութիւնն դարմանելոյ , ընտանեաց կազմութիւնն դիւրացնելոյ և խոչնդոտները բառնալոյ եղանակն :

Սակայն չ'կարծեն մեր ընթերցողք թէ մոռ-

յած եւք այն անթիւ ընտանիքներն որք հայ-
րենեաց հողոյն վերայ կը բնակին , և որք ա-
ւելի մեծ թշուառութեան մասնուած են տար-
բեր պատճառներով . սակայն այդ պատճառ-
ներն վերլուծելն խիտ ծանր է և երկար ժա-
մանակի կարօտ : Մանաւանդ թէ ի՞նչպէս
կրնամք այդ խեղճ ընտանեաց վերայ խօսիլ
առանց քաղաքական խնդրոց մէջ մտնելու .
բայց այդ նիւթին վերայ անաչառապէս խօսե-
լու համարձակութիւնը — չ'ըսեմք ազատու-
թիւնը — կը պակտի մեզ . մինչև իսկ յառա-
ջագրեալ նիւթին վերայ խօսուած ժամանակ
պիտի պատահին այնպիսի կէտեր որք աւելի
ընդարձակօրէն բացատրուելու պէտք ունէին,
և յակամայս կրճատուած են . առ այս ընթեր-
ցողացս ներողամտութիւնը կը խնդրեմ , որք
արդէն յօժարամտութեամբ պիտի ներէին մեզ
եթէ գլխանային թէ ինչ փիճակի մէջ հեղինա-
կեցինք սոյն գործն , որ եթէ փոքր ինչ ընդու-
նելութեան արժանանայ ապագային մէջ այս
նիւթոց վերայ կրկին խօսելու առիթ կունենամք :

Այլ միանգամ և եթ աստ յայտարարելն
բաւական լինի , թէ ներկայ գործս իւր հա-
մառօտութեամբն և թերութեամբն հանդերձ
կրնայ անօգուտ չ'ըլլալ :

Ահաւասիկ ինչ որ համարձակութիւն ներ-
չընչած է հեղինակին :

Ընտանեաց մէն մի անհատ զանազան կա-
պերով միացած է ընտանեկան ամբողջութեան
հետ . այր , կին , զաւակ , իւրաքաչիւրն ու-
նին պարտաւորութիւններ զորս հարկ է ընուլ
և իրաւունքներ զորս հարկ է վայելել :

Բնութիւնն հիանալի եղանակաւ գծած է
մի օրէնք , որ անդիմադրելի է և անճնշելի ,
և զայն դրած ընտանեկան յարկի մէջ . մէն
մի անհատ առ այն կը մղուի , առ այն կը շար-
ժի . ընդդմառի խմանալով , թէ նորա գոր-
ծադրութեան մէջ միայն կարող է որոնել զիւր
երջանկութիւնն , զիւր ապահովութիւնն . երբ
մին կը կատարէ իւր պարտիքներն , միւսը վա-
յելած կը լինի իւր իրաւունքներն , և փոխա-
դարձաբար . ահա այսպէս պարտքն և իրա-
ւունքն միմեանց հետ կապուած են անանջա-
տելի կերպիւ :

Ընտանիքն իւր սահմանին մէջ կրնամք բաղ-
դատել ընկերականութեան մի հետ զոր բաղ-
կացնող անհատք ունին միմեանց նկատմամբ
պարտքեր և իրաւունքներ . քաղաքական իշ-
խանութիւնը կը հսկէ և իւր զօրութիւնն կը
գործածէ ընկերութեան այս կապն անխցելի
պահելոյ համար , իւր զօրութիւնն է իշխանա-
կան սատան , բանտն , սուրը , թնթանօթն և ըն

և այն ամեն պատժական միջոցներն զորս ի գործ կը դնէ արդարութեան սկզբունքները անվրթար պահելոյ համար, և այսպէս ճանչցնել տայ իւրաքանչիւրին պարտիքներն և բռնաբար կատարել. որով միայն կընայ անհատն վայելել իւր իրաւունքներն և այսպէս կ'ապահովուի մարդկային կեանքն:

Սակայն իւր իշխանութիւնն կը դադրի ընտանեկան սեմոց առաջ և ներս չէ կարող թափանցել իւր զօրութիւնն. և եթէ երբեմն բացառիկ տխուր պարագայից մէջ կը հարկադրի, կը միջամտէ վէճերու, զժառութեանց, քանի՞ աղետաբեր է իւր միջամտութիւնն առ հասարակ ընտանեաց անդամոց. վայ այն ընտանեաց որք խոնարհելով գերագոյն իշխանութեան ակոռէն կ'ստրկանան կը զիջանին գլուխ ծըռել ենթարկել զիրենք քաղաքական իշխանութեան վճռոց, նորա որոշման հնազանդիլ: Այլ ևս կը թռչի ընտանեկան երջանիկ և բարեբաստիկ կեանքն. ոչ ում պիտի յաջորդէ տաժանելի մի կեանք, զուրկ կենաց հաճոյքներէ և վայելմունքներէ և այս զրկանքն պիտի ծանրանայ ոչ միայն պատժապարտին այլ նաև անմեղին վերայ. նաևս պիտի կրէ այդ աղէտքն, ոյր պատճառաւ ալ յառաջ եկած լինի:

Զի ընտանիքն մարմին մի է բարոյապէս որոյ մի մասն մի անդամն եթէ վշտակրի իւր

զգացած ցաւն իսկ և իսկ կը ներգործէ անդամոց վերայ:

Ինչպէ՞ս կարելի է որ կինն երջանիկ լինի, ցորչափ կը տեսնէ զիւր, ամուսինն թշուառ, մոլի, ցորչափ ինքն զգացում ունի իւր սրտին մէջ և բարախում իւր կրծոց տակ. երբ կը տեսնէ որ ամբողջ ապագայ մի, իւր զաւակաց իւր սերնդեան յաջորդութիւնն ոտնակոխ կը լինի ամուսնոյն անտարբերութեամբ և մինչև իսկ իւր ներկայ վայրկեաններն կը խռովէ. այն ատեն կը ցասնու մոլեգին և վրէժն կուզէ պահանջել, կը դիմէ հասարակաց ատեաններու, աւանդ հոն կ'ուզէ իրաւունքն պաշտպանել կը խօսի, կը յայտնէ ամեն զաղտնիք անսլատկառ. որով կը յուսայ իւր վշտացն մի դարման հայթայթել. վիշտեր, ոյց վերայ մարդկային ընկերականութիւնը ծիծաղել միայն գիտէ և ոչինչ աւելի. կ'անարդէ ընտանեաց պատին և ընդհանուրին խօսակցութեան նիւթ կը մատակարարէ. յոռի միջոց, որով աւելի արգահատելի, ցաւալի վիճակ մի կ'ստանայ, ամուսնոց մէջ եղած վէճերն յոյզ և գրգիռ կ'առնուն և բաժանման կ'առաջնորդեն, մեծ անդարմանելի պատճառ մի յառաջ կը բերէ, որով ամուսնոց յարաբերութիւնք մշտնջենապէս կը խզին, ահագին պատնէշներ կանջրպետեն զիրեար, կ'ապրին առանձնակի առար-

կայ մարդկային նախատանայ և այգանայ :
 Քանի մեծ է իրենց կուրութիւնն, անհեռա-
 տեսութիւնն, ինչ որ չկրցան իրենց մէջ գտնել,
 խաղաղութիւն, սէր, հաշտութիւն կը յուսան
 հասարակաց ատեաններու միջոցաւ ձեռք բե-
 րել :

Սակայն բնութիւնը տարբեր կերպով տնօ-
 րինած է ընտանեաց զեղծումներն բուժելու
 միջոցներն . դարմանն պէտք է գտնել ընտա-
 նեկան պարտուց շարքին մէջ, պարտքեր,
 զորս չկարէ քաղաքական իշխանութիւնն բռ-
 նաբար կատարելու ստիպել . ընտանեկան յար-
 կին մէջ է այդ իշխանութիւնն որ կը տայ ճանչ-
 ցընել իւրաքանչիւրին իրաւունքներն և պարտ-
 քերն և իւր քաղցր ազդեցութեան ներքե
 իրենց պարտուց դործադրութեան կը մը
 դէ անհատներն : Այսպէս բնութիւնը նախա-
 պատիւ նախաթող ըրած է ամեն քաղաքական
 արտաքին իշխանութիւններէ և նորա ձեռաց
 յանձնած է ընտանեաց կառավարութեան դէկն :
 Այն որ կարող է բռնաբարել, անարդել այդ
 իշխանութիւն, առանց ինքն ալ այդ նախա-
 տանայ, անարդանայ մասնակցելու . ուստի
 հարկադրեալ է հպատակիլ այդ իշխանութեան
 պատկառիլ ի նմանէ, յարդել մեծարել զինքն,
 և յայդմ է բովանդակ անհատին երջանկու-
 թիւնը, կենաց քաղցրութիւնը :

Այլ ո՞րն է այդ դերադոյն իշխանութիւնը,
 որո՞ւ յանձնած է նախախնամութիւնը այդ
 մեծ և վեճմ պաշտօնը, ո՞վ է այդ խորհրդա-
 ւոր էակը որում շնորհած է Արարիչը իշխա-
 նութեան այդ անբաւ կարողութիւնը . ընտան-
 եաց խաղաղութեան, սիրոյ, երջանկութեան
 սերմն անարատ պահելու և աճեցնելու նա-
 խասահմանեալ է, — կինը :

Այո՛ , կլինն ընդունած է այս բարձր պաշտօնն նախախնամութենէն . Աբարիչը իւր աստուածային պերճութեան ճաճանչն սփռելով կնոջ վերայ և իշխանական թագն գնելով գըլխոյն վերայ զայն մարդկութեան թագուհին ըրած է . մարդկային երանութեան զօրութիւնը նորա ձեռաց մէջ գնելով . Նախախնամութիւնը կ'ըսեմ , որ ամեն էակի զիւր պաշտօն յանձնած է անշունչ աննիւթ առարկաներէն սկսեալ մինչև 'ի մարդն . մարդկային կրկին սեռից տարբեր պաշտօններ սահմանած է . մինչ այրն կը գործէ ընտանեկան սեմէն դուրս , քաղաքական ընկերային ասպարէզին մէջ , կլինն ընտանեկան յարկին ներքև կը գործէ և կ'իշխէ առն կամաց և մտաց վերայ . մարդս նորա ներշնչութեան ազդեցութեան ներքև կ'զգայ , կը մտածէ , կը խորհի և կը գործէ . մե՛ծ և բարձր պաշտօն զոր սահմանած է Աբարիչն կնոջ , առաջնորդելոյ համար զմարդն դէպ յիտէական գեղեցկութիւն , դէպ ի նպատակն առաջնորդելոյ և երջանկայնելոյ զմարդ :

Թէպէտև կլինն ակար և փափուկ էակ , իւր ֆիզիզական զօրութիւնն նուազ է քան զմարդոյն , որ աւելի հաստատուն , տոկուն իմացականութեամբ օժտեալ է բնութենէն : Այո՛ ,

մարդս իւր առնական զօրութեամբ հպարտացեալ չ'է ճանչցած այդ էակին զօրութիւնն և մինչև իսկ կրօնից պաշտօնեաներ զայն իբր ըստրուկ , իբր անարգ մի էակ ճանչելոյ տխուր դաղափարն ներշնչած են :

Սակայն վերջապէս բնութիւնը իւր յաղթանակը տարած է և մարդն կնոջ անդիմադրելի ազդեցութեան իշխանութեան ներքև ընկճուած է , ցորչափ յառաջդիմած է լուսաւորութեան մէջ , բարձրացած քաղաքակրթութեան մէջ :

Այլ ի՞նչ է այդ խորհրդաւոր էակին զօրութիւնը , որ կը յափշտակէ , կը հիացնէ , կը խանարհեցնէ և գերազայն էակ մի կը լինի մարդոյն համար : Իւր քաղցրութիւնն , անմեղութիւնն , գգայնութիւնն , ճաշկաց նրբութիւնն գորովն որով համակուած է միշտ կլինն , գըլթութեան սիրոյ անսպառելի աղբիւր մի է իւր սիրան , իւր ժպիտն աստուածային ճաճանչ մի է մարմնացեալ որ կը ճառագայթէ , կը լուսաւորէ , այնքան հզօր է իւր ազդեցութիւնը :

Արտաքին գեղեցկութիւնն ներքին հոգւոյն գեղեցկութեան փայլն է . մարմնոյ գեղեցկութիւնն կապուած է հոգւոյն գեղեցկութեան հետ , այնպէս որ շատ անգամ տղեզ մի դէմք աղնուազոյն զգացմանց վե՛հ ճառագայթմամբ կը գեղեցկանայ կը հրապուրէ . կ'ըքանչայնէ

զամենքն , մինչդեռ ընդհակառակն բնութեան ստեղծած ամենէն պերճ և շնորհագեղ պատկերն , անարգ զգացմանց ազդեցութեամբ կը տձևի , կը տգեղանայ և կը կորուսէ զիւր շնորհն , վայելչութիւնն և հրապոյրն , այնքան անբաժանելի է մարմնոյ գեղն հոգւոյ գեղեցկութենէն : Հոգւոյն շնորհած ցոլացումն է արտաքին գեղն որով կը լինի կինն մի գերբնային էակ կը դիւթէ , կը հմայէ , կը յափըշտակէ , որ կը խոնարհեցնէ ամենէն գոռոզ և հպարտ գլուխներն , և սէգ ճակատներն կը վայրահակէ . որոյ առաջ ծունր կը կրկնէ զօրաւորն ու տկարն . այնքան մեծ է իւր զօրութիւնն որ ամենէն չարբարոյ վատշուէր էակն կ'զգուշանայ գէթ փոքր ինչ երբ տեսնէ մի կրնոյ համեստ կերպարանն . կ'զգածուի , կը մեղմէ զիւր վայրագութիւնն , առաքինութեան , սրբութեան սեղան մի կը նշմարէ նորա սրտին մէջ որոյ առաջ յօժարակամ կը զոհէ զիւր անձն , զիւր հաճոյքն , որպէս զի հաճելի ըլլայ կնոյ , կը սիրէ նորա զգացմամբն համակուիլ . իւր զուարթութիւնն , երջանկութիւնն , կեանքն նորա շունչէն կախեալ է . այսքան մեծ է կնոյ ներգործութիւնը իւր ամուսնոյն վերայ :

Նախախնամութիւնն , գեղեցկութիւն , առաքինութիւն , վեհ և ազնիւ զգացումներ պարզեւելով կնոյ , և նոցա ճաշակն դնելով

առն սրտին մէջ , ուղած է բարձրացնել մարդկութիւնն կնոյ առաջնորդութեամբ : Այո՛ , կինն կ'առաջնորդէ միշտ , կ'իշխէ իւր ամուսնոյն , կ'իշխէ նաև իւր զաւակաց վերայ :

Վասն զի իբր մայր վնեմ պաշտօն մի ունի , Արարչական դեր մի կը կատարէ . բովանդակ մարդկութիւնը նորա ձեռաց մէջ կը կազմակերպի , մարդն նորա գրկաց մէջ կ'ընդունի իւր մարմնոյ էութիւնը , նորա արեւրուն մէջ կը կերպարանաւորի իւր ճակատագիրն և կը լինի ինչ որ ուզէ կինն ընել գեղեցիկ , վեհ , առոյգ , կորովի . կամ գծուծ , անարգ , տգեղ . այսպէս մարդն իւր նիւթական գոյութիւնն մեծ մասամբ կը պարտաւորի կնոյ : Իսկ իւր բարոյական էութիւնը ամբողջովին նորա պատկերն դրոշմն կը կրէ . ինչպէս մարմնոյ կաթով կը սնուցանէ իւր զաւակն , այնպէս հոգւոյն կաթը կը ջամբէ մանկան . նորա մատաղ սրբտին մէջ կանուխէն կ'սկսի ցանել բարոյականի սերմն տալ երախային մտաւորական զարգացում և աճում . նորա սրտին մէջ կը վառէ հայրենեաց , ընկերային սիրոյ հուրը . կը հաստատէ ճաշակներն , զգացումներն , բարոյականի սկզբունքներն . և ինչ որ նորա մասն կը գրէ , ոչ ոք կարող է զայն ջնջել , անկորնչելի է այն և անփոփոխ :

Մարդս իւր մօր կենդանի հայելին ու պատ-

կերն է : Իրաւամբ կը գոչեր իմաստուն կըրթեալ մայր մի թէ «Իմ զաւակներս իմ ապագայ կեանքս են» :

Ահա այսպէս , ազդելով ֆիզիզապէս , բարոյապէս անհատից վերայ , ամուսնոյն , զաւակաց վերայ . կլինն ընտանեաց իշխողն է և հետեւաբար կ'իշխէ ազգաց և ընկերականութեան վերայ : Զի ինչպէս ըսինք ազգերն և ընտանիքներն ուրիշ բան չ'են , այլ ընտանեաց ամբողջութիւնն որոյ ունեցած նիւթական , բարոյական , ֆիզիզական վիճակն ու զօրութիւնը ընտանեաց վիճակէն , զօրութենէն կախեալ է , և ընտանիքի վիճակն մեծագոյն մասամբ մանաւանդ բարոյականն կնոյժմէ կախեալ է :

Եթէ մի կլին համեստ ու առաքինի ըլլայ , այն ընթացքն ու ուղղութիւնն կ'առնուն ընտանեաց անհատներն , իսկ եթէ մոլի , անարգ , դձուձձ հաւասարապէս կը վնասէ իւր անձին , յետոյ նոյն ընտանեաց անդամոց . հետզհետէ օրինակն ընդհանրանալով կ'ապականի ամբողջ ընտանիքն . յետոյ փողոցն , յետոյ թաղն , քաղաքն , Ազգն վերջապէս ամբողջ ընկերականութիւնն :

Այլ սակայն Արարիչը ազնուագոյն ձիրքերն ու շնորհները պարզեւելով կնոյժ և զայն ընտանեաց իշխանութիւն կարգելով , պաշտօն տուած է նմա մղել զմարդն դէպ ի գեղեցիկն , ճշմա-

րիան , բարին յղկել , զիւր ակտորժականներն , բարձրացնել անասնական վիճակէն դէպ ի բարոյական վիճակ յ'աստիճան կատարելութեան , և կինն կատարած է այս պաշտօնն ցորչափ ինքն լուսաւորուած է գիտութեան ճառագայթներով և ճանչցած զիւր կոչումն և իւր գեղեցիկ ձիւքեր ու հանգամանքներն մշակած բարոյապէս մտաւորապէս և գործածած հասարակաց օգտին համար :

Բայց ստէպ պատահած է որ այդ երկնատուր պարզեւներն , կինն աղետալի օժիտ մի բերած է յ'Աշխարհ և շարաչար գործածելով , մոլութեանց , ապականութեանց պատճառ ընծայած է մարդկութեան :

Այո՛ , երբ կինն անուս , տգէտ վիճակին մէջ ճանչելով իւր առաւելութիւններն , առանց զայնս մշակելու , գահավիժաբար յառաջ գացած է :

Արգարեւ , ժամանակ մի էր , յորում կինն քան զայն ստորին էակ մի կը նկատուէր , ուսկից ուրիշ բան չ'էր պահանջուեր , բայց միայն զգայական հաճոյք . բռնութիւնն զայն բանտարկած էր տանց անկիւնն , և փաթութաթած շղարչներու մէջ անտեսանելի , աներեւոյթ գրեթէ առն աչաց :

Սակայն վերջին 20—25 տարուան միջոցին մէջ երբ սկսաւ եւրոպական քաղաքակրթու-

թիւնն տակաւ առ տակաւ թափանցել մայրաքաղաքիս մթնոլորտն , յեղափոխեց սովորութիւններն ու բարքերն :

Բնականաբար կինն անհաղորդ չ'պիտի մնար այս այլափոխութեանց , քանի որ կինն աւելի սիրահար էր գեղեցիկ ակտորժակաց , նուրբ ճաշակաց , ուստի ջերմիւ փարեցաւ , ընդգրկեց եւրոպական քաղաքակրթութեան սովորութիւններն և մերկացաւ իր նախկին բարքն ու սովորութիւնքն , այլափոխեց ընտանեկան կարգերն ու կանոններն որոց մէջ օգտակար և բարի մասեր ալ կը գտնուէին որք զլիսաւորաբար Ազգութեան , Հայ ընտանեաց յատկանիչն կը կազմէին :

Այլ կինն տգէտ էր և չ'կարէր զանազանել օգտակարը վնասակարէն , ուստի մերկացահինը և զգեցաւ նորն , որ գժբաղգարար չարիքներէ զերծ չ'էր :

Քաղաքակրթութիւնն ալ ունէր իւր մոլութիւններն , սակայն կինն իւր միամտութեամբն , անգէտ լինելովն զինքն չըճապատող առարկայից , մանկան նման ընտրեց միայն անոնք որ փայլ և շողիւն ունէին և զինքն կերպարանափոխ ընելով եւրոպացի քաղաքակրթեալ կին մը պիտի ձեւայնէին արտաբուստ , սկսաւ այլ ևս եւրոպացի կանանց պէս հագուիլ շքուիլ , անոնց սովորութեանց , բնաւորութեանց համակեր-

պիւ կորուսանելով իւր Ազգային ընդհանրա-
կան դրոշմն :

Մեծ եղաւ սքանչացումը , երբ առաջին ան-
գամ հայելւոյն մէջ նկատեց իւր պատկերը .
տարբերութիւնն անբաղդատելի էր , վարդա-
գոյն կարմրուկ մի իւր այտերուն վերայ ծա-
ւալեցաւ անզգալապէս . հպարտացաւ կի՛նն ,
յիշեց իւր նախկին կերպարանն , անվայելուչ,
տձև զգեստուց մէջ . արդարացի ցասում մի
զինքն գրգռեց ընկերականութեան դէմ , որ
այնքան երկար ժամանակներ պահած էր զինքն
ստրկութեան , անարդութեան մէջ և անգէտ
ըրած էր իւր վայելչութեան և գեղեցկութեան :

Յասումը վրէժխնդրութեան փոխուեցաւ , և
զողցես վրէժխնդրութեան ոգւով շարժեալ ,
անօգուտ շքոյ և պերճութեանց հետամտու-
թիւնն ունեցաւ միայն . այլ ևս մոռցաւ իւր
սրբազան պարտաւորութիւններն , մոռցաւ
պարկեշտութիւնն , համեստութիւնը , փոյթ
չտարաւ կրթելու , մշակելու հոգւոյն ձիւքերն ,
մտքին կարողութիւններն , սրով պիտի բարձ-
րանար իւր պատիւն , փառքն և ճշմարիտ քա-
ղաքակրթեալ կին մը պիտի լինէր , որուն նմա-
նելու համար միայն անոնց զգեստն կրել բա-
ւական համարեց :

Եթէ միանգամ քննէր անոնց վիճակն նիւ-
թապէս , մտաւորապէս և բաղդատութիւն մի

ըներ իւր վիճակին հետ , որ զուրկ էր գլխու-
վին այն յատկութիւններէն , իսկոյն պիտի հա-
մողուէր թէ ո՞րքան աղետաբեր , վտանգաւոր
կրնայ ըլլալ իւր դրեց համար . հապա եթէ
խելամուտ եղած լինէր այն մտլութեանց որ
նոյն ինքն այդ կանանց շքեղ զգեստուց ներ-
քև ծածկուած էին , սարսափահար պիտի ըն-
կըրկէր տեսնելով այն վէրքերն որովք քաղա-
քակիրթ ժողովուրդներն մեծ մասամբ լցուած
էին և որ կանանց պճնասիրութեան հետե-
ւանքներն էին :

Այն ատեն պիտի համողուէր , պճնասիրու-
թիւնը՝ զոր իբր միջոց ազատութեան կը կար-
ծէր , շղթայ մի է որ կը կապէ զինքն մոլու-
թեանց հետ , ահռելի ոճիրներու հետ , որոց
սահմանն ընդարձակ է և անհաշուելի , որ ըն-
տանեաց թշուառութիւն և կործանում կը
պատճառէ , կը կորուսէ ինքն իւր նախկին
փառքն , արժանապատուութիւնն և գերիշ-
խանութիւնն :



ԳԼՈՒԽ Է.

Ընթերցող Հայուհին չ'կարծէ որ մեք ջատագով կը կանգնինք այն կոշտ ձևոց տգեղ գգեատուց , զորս հին սովորութիւնն յատկացուցած էր կնոջ և նորա գեղն չնորհն ծածկած անվայելուչ կրեղեաց կիրառութեան մէջ :

Յոռի ճաշակաց անկ է յետամնաց գաղափարաց , մեղադրելի բացատրութիւնն . մեք կը յարգեմք յառաջգիմութիւնը , կը սիրեմք քաղաքակրթութիւնը , և կը հաւատամք որ նորահնար ձևոց սովորութիւնն քայլ մի էր գէպ յ'առաջգիմութիւն . այս' , գեղեցկին ճաշակն զարթուցանել , գեղեցկին գաղափարն տպաւորել մտքին մէջ , զգալի յառաջգիմութիւն մի էր գէպ ի բարոյական գեղեցկութիւնն . եթէ միևնոյն ժամանակ զգայր թէ , միտքն ալ պէտք ունի զարգարուելու մերկանալու նախկին կոշտ ձևերն , այն նախապաշարումներն , սգիտութիւնն , այլանդակ գաղափարներն , որք մտքին շուրջն թանձր մշուշով մի պատելով գիտութեան լոյսն անթափանցելի ըրած էին . զգայր թէ ինչպէս արտաքուստ քաղաքակրթեալ աշխարհին նմանիլ կը ջանայ , նոյնպէս իւր ներքինն , հոգւոյն կարողութիւններն մշակելու , զարգարելու պարտաւոր է :

Այն ատեն հաւասարակշռութիւնն պիտի

պահուէր և այսու պիտի կարենային վաղ սանձ գնել սեթևեթի , պաճուճանաց և անկից հետևելիք մոլութեանց . պիտի հասկանային թէ բաւական չէ լոկ արտաքին ձևափոխութիւնն զի տխուր հակապատկեր մի կը ներկայացնէ քաղաքակրթութեան և վայրենութեան , և չէ կարող իրական բարւոքում մի յառաջ բերել կնոջ ց'այն վայր վարած ստրուկ կենաց վերայ :

Առանց զէկի նաւու մը նման , զուրկ մտաւոր և բարոյական դաստիարակութենէ ազնուագոյն պատուականագոյն մասէն մարդկային գոյացութեանց , սկսաւ յառաջանալ քաղաքակրթութեան ովկիանոսին մէջ ուր այնքան խութք կան , անդունդք գահալէժք և ժայռեր ոյց գէմ կրնար փշրիլ և ընկղմիլ :

Նախ ուրեմն պէտք էր ստանալ բանավարութեան զէկն մտաւոր և բարոյական դաստիարակութիւնն , անկից բնականաբար պիտի հետևէր իւր արտաքին ձևափոխութիւնն . ցորչափ իրեն ճաշակներն յղկուէին և ազնուանային . բայց սա առաւելութիւնն պիտի յառաջ գայր այն ատեն , որ զերծ պիտի մնային քաղաքակրթութեան մէջ եղած մոլութիւններէն և ընտանիքներն չ'պիտի ստանային ներկայ տխուր վիճակն , և մեզ ալ այս տողերն զրեւու առիթն պիտի պակասէր :

Այս փոփոխութիւնն ուրիշ արգիւնք մը չ'ու-

նեցաւ . այլ անկումէ յանկում գլորեցաւ կինն :

Տգիտաբար աղատութիւն , քաղաքակրթութիւն իգական սեռին փրկութիւն , գոչեցին խել մի թեթեամիտներ : Իսկ կարգ մի անբարոյական անձինք , լռելեայն սկսան ժպտիլ . վասն զի գիտէին թէ այս ծայրայեղութիւնը կնոջ անկումը յառաջ պիտի բերէ յորմէ օգուտ պիտի քաղեն անոնք՝ որոց սիրտն կոշտ հեշտասիրութեամբ գրաւուած , կնոջ անկմամբ ընդարձակ ասպարէզ մի պիտի գտնեն իրենց մուկար սկզբանց և անբանական հաճոյից առաջ :

Դէպ ՚ի քաղաքակրթութիւն առաջնորդող այս խոտոր ճանապարհն , հասարակաց բարոյական ուղղութիւնն եղծանելու պատճառներ յառաջ բերաւ . իրականացաւ այն ճշմարտութիւնը զոր ՚ի վեր անդր բացատրեցինք թէ ինչ որ ուզէ կինն ընել , մարդն պիտի ստանայ նոյն վիճակն . եթէ կինն պարկեշտութեամբ , առաքինութեամբ ապրէր , այդ սինկրոր մարդոց անարգ զգացմանց ասպարէզ չ'պիտի թողուր , և իւր քաղցրութեամբն , հրապուրանօք պիտի առաջնորդէր դէպ ՚ի բարոյական ուղղութիւն . աշխարհի մոլութեանց գլխաւոր պատճառներէն մին պիտի վերնար :

Երբ առաջին քայլն առաւ կինն դէպ ՚ի քաղաքակրթութիւն , վիհ , անդունդ կայր իւր քայլին տակ , ուր պիտի գահավիժէր ինքն և

իրեն հետ Հայ ընկերականութիւնն . քաղաքակրթութեան կերպարանին ներքեւ սքողուած մոլութեան ոգին էր այն որ իւր արտաքին հրապուրիչ ձևովն աւելի շուտ տարածում պիտի գտնէր , նախ իգական սեռն ասպականելով և ապա Հայ ընկերականութիւնը :

« Թէ անհատական , թէ ընտանեկան և թէ ազգային տեսութեամբ նկատելով միշտ վնասակար է այն աղատութիւնը որ մտաւոր և բարոյական զարգացման հետևութիւնն չ'է : »*

Ուստի անոնք որ հանրութեան օգուտը կը մտածէին , կը դատապարտէին քաղաքակրթութեան ընտանեաց մէջ ներմուծած սովորութիւնն . մանաւանդ ծերունիներն հեռատեսութեամբ , ուշիմութեամբ տեսին այդ սովորութեան յառաջ բերած աղետաբեր հետեւանքն . լիտութիւն , անպարկեշտութիւն , անբարոյականութիւն գոչեցին զայրացմամբ . և այդ աղաղակներն սա գաղափարն ներշնչեցին , թէ իգական սեռին աղատութիւնը , լուսաւորութիւնը իրենց ջղերուն կը դալի . բայց այսօր այդ ծերունիներուն գուշակութիւնը դժբաղդաբար մեծ մասամբ իրականացած է , վա-

* « Տարերք յառաջդիմութեան ,, բանաստեղծութիւն Խօսեցեալ ՚ի Լօսարանի Հայկանոյշ վարժարանին յ'Յէնի-գարու 1877 :

որն զի փորձառութեամբ կը խօսէին . որք աւելի լաւ գիտէին ընտանիք կառավարել , կընող յարգն ճանչել . եթէ փոքր ինչ խտտապահանջ էին խտտաբարոյ , սակայն լաւ գիտէին կնոջ պատիւն պահպանել , որուն դէմ եկած ամեն հարուած մեղք կը համարէին , ոճիր մի անքաւելի . նոքա ընտանեաց բարուք կացութեան և երջանկութեան համար իրենց զաւակաց դաստիարակութեան և ապագային համար լաւ կը մտածէին , և ամեն միջոց կը գործադրէին որպէս զի մոլութիւնք մուտք չ'գրասնն ընտանեաց մէջ , թէև իրենց միջոցներն փոքր ինչ բռնական էին և աններելի . և այս էր որ վիրաւորեց մեր Տիկնանց փափկասրտութիւնն և ուզեցին սանձարձակ ազատութիւն վայելել քաղաքակրթութեան մէջ . մեկ ծայրայեղութենէ միւսն գլորեցան :

Սակայն պէտք էր քայլ առ քայլ յառաջանալ , եթէ մի կողմէն կը ջնջուէր նախնի զգեստուց ձևերն , և անոր հետ 'ի միասին կրաւորական ամօթն . անոնց պէտք էր յաջորդել վայելչազարգութիւնն , պատկառանքն . տնտեսական , առողջաբանական օրինաց համեմատ ընտանեկան նոր կարգեր և կանոններ որով զերծ պիտի մնային քաղաքակրթութեան մոլութիւններէն :

Տիկնանց սոյն դահավէժ ընթացքն ո՛չ միայն

վնասեց իրենց , այլ նաև Ազգային յառաջդիմութեան դէմ խոչնդոտներ յարոյց . վասն զի արձագանգ չ'գտաւ լուսաւորութեան ձայնն ընտանեաց մէջ , և մի մասին ալ սա տխուր գաղափարն ներշնչեց թէ քաղաքակրթութիւնն չ'է կարող կենաց բարուքում տալ և կեղծանէ բնական և բարոյական կարգերն . սոքա ևս այս թիւր կարծիքներով զինեցան լուսաւորութեան ձայնին դէմ :

Բայց բարեբաղդաբար գտնուեցաւ բացառութիւն մի , ողջախոհ , ուղղամիտ անձինք որք խորչեցան այս ծայրայեղութիւններէն , աշխատեցան և կ'աշխատին լուսաւորել մտքերն և ճշմարիտ քաղաքակրթութեան պատրաստել . լռելեայն արտասուեցին և կ'ողբան տակաւին յիշելով անցեալ երջանկութիւնը , ներկայ ցաւալի վիճակն , երիտասարդաց թշուառութիւնը և կնոջ անկումը :



Որքան ցաւալի կերպարան մի առած է այսօր ընտանեաց վիճակն՝ բաղդատելով անցելոյն հետ . եղած չէր ժամանակ մի որ կանայք այսքան սիրուն և գեղանի երեւէին իրենց զարգերովն , զգեստուց նորանոր ձևերովն : Բայց եղած չէր ժամանակ մ'ալ , որ մոլութիւնք այսքան բազմացած լինէին . սրուն գլխաւոր պատճառներէն մին՝ և կրնամք ըսել առաջինն , արդի Տիկնանց ՊՃՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ է որ ընտանեաց մէջ մուտ գտնալէ 'ի վեր , զիւրակեցութիւնը , սակաւապետութիւնը , խնայողութիւնը 'ի վաղուց ստացուած բարի սովորութիւններն ջնջելով , շուայլութեան տեղի տուած է , աւելորդ ծախուց քանակն հետըզհետէ բարձրանալով . միւս կողմանէ քաղաքական տազնապններն գրամական վիճակներն զգրգելով՝ ընտանեաց նիւթապէս անկումներ յառաջ եկած են :

Հազարաւոր դժուարութիւններ ծագած են ընտանեկան կենաց մէջ , այս պատճառաւ ընտանեաց կազմութիւնն նուազած և ամուրեաց թիւն օր ըստ օրէ աճում առած է , որ ոչ նուազ ապականութիւն մի է ընկերականութեան համար :

Հապա եթէ քննեմք երիտասարդաց վիճակն ,

որչափ պիտի անարգեմք պճնասիրութեան վատթար սովորութիւնն որ աւելի դժնդակ վիճակի ենթարկած է այդ դժբաղդ արարածներն :

Պէտք չէ խարուիլ այդ երիտասարդաց փայլուն կերպարանէն . խորազննին հայեցուածն բաւական է հասկանալ թէ անկեալ են ֆիզիգապէս , անկեալ են նիւթապէս , անկեալ բարոյապէս :

Այս անկումներու գլխաւոր պատճառն է ընտանեաց կազմութեան դժուարութիւններն և անկէց ծագած հետեւանքներն որ ազգաց , ընկերականութեան , վերջապէս աշխարհի ապականութեանց շարժառիթներն են :

Հարեանցի քննութեամբ եթէ այս հետքերն խուզարկեմք , պիտի կարենամք հաստատել որ պճնասիրութիւնն մոլութիւն մի է , որ ուրիշ մոլութեանց տեղի կը տայ . նախ կը կործանէ զկինն ֆիզիգապէս , ապա ընտանիքն և հետեւաբար ընկերականութիւնն :

Մեք ևս այս դասակարգութիւնը , բնական կարգը պիտի պահեմք . նախապէս ցոյց տալով իգական սեռին հասուցած փնայները պարզ , մեկին բացատրութեամբ , չափաւոր ազատամտութեամբ . առ ոչինչ գրելով նախապաշարեալ անձանց , խաւարային ռզուոց տրտունջն . միայն նպատակ ունենալով մեզ կը-

նոյ պատիւն , երիտասարդաց կեանքն , ըն-
տանեաց երջանկութիւնն և վերջապէս հան-
րութեան օգուտն :



Թող ներեն մեր պճնասէր Տիկիներն , երբ
ընկերային մուլութեանց պատճառ կը դնեմք
պճնասիրութիւնը . թող գան մեզ հետեկն և
մեր ընելիք քննութեանց խորը մտնեն . մի քիչ
խոհեմութիւն ունենան սանձ դնելու բուռն
կրից և բարեսիրաբար ընկերականութեան վե-
րայդարձենն իրենց ուշադրութիւնն . որոց վեր-
քերն իւրեանց փափուկ ձեռներն միայն կա-
րող են բուժել : Վասն զի իրենք պատճառե-
ցին այդ վէրքերն անհեռատեսութեամբ ա-
ռանց մտածելու թէ իրենք ալ փասու պիտի
ենթարկին , քանի որ մի և նոյն ընկերական
մարմնոյն մի անդամն կը կազմեն . մանաւանդ
թէ իրենց հասուցած չարիքն աւելի իրենց կը
փասսէ քան թէ ամբողջ ընկերականութեան :

Ուստի երբ մեք կը խօսիմք պճնասիրութեան
վերայ՝ որոյ յառաջ բերած աղէտքն կ'ուզեմք
նկարագրել , գլխաւորաբար մեր ուշադրութիւ-
նը կը դառնայ պճնասէր Տիկեանց վերայ , ու-
րոց ներողամտութիւնը կը խնդրեմք պահ մի :

Ի վեր անդր ըսինք թէ , պճնասիրութիւնը
կը փասսէ ֆիզիզապէս . և ի նչպէս չ'փասսէ ,
քանի որ հազուստի ազանեղեաց նպատակն
կը խեղաթիւրեմք :

Նախնիք կը գործածէին զգետան բնական

պիտոյից համար , իրենց ճաշակն այնքան նրբ-
բացած չ'լինելով վայելչաձևութեան մասին մեծ
խնամք չ'էին տաներ . այդ ձևերն արդի ձևոց
հետ բաղդատելով շատ տձև կոշտ կը գտնեմք
արդի ճաշակաց համար , որք աւելի նրբացած
և փափկացած են , բայց ժամանակակից մար-
դոց համար ճաշակէ վաւելչութենէ զուրկ չ'էին :

Մեր որ պարզասիրութիւնը կը յարգեմք ,
նորա անուրանալի օգուտները կը ճանչեմք ,
չ'եմք կրնար ընդունիլ այդ հին ձևերն , որք
վայելչութեան օրինաց համաձայն չ'են և ար-
դի ճաշակաց չ'են համապատասխաններ . սա-
կայն այսու հանդերձ իրենց առաւելութիւն-
ներն ալ անուրանալի են առողջաբանական տե-
սութեամբ . այս առաւելութիւնն զգեստն իրր
բնական պէտք մի գործածելէն յառաջ եկած է :

Նախնիք կը գործածէին զգեստն ցուրտէն
պատասպարուելու համար . աղա՛տ լայնարձակ
զգեստներ կը կրէին և համարձակ կը շնչէին
օդը . իրենց մարմնոյն ձևոց կը յարմարցը-
նէին զգեստներն , հանգստութեամբ կ'անցը-
նէին իրենց վայրկեաններն , ստամբան , աղիք-
ներն և վերջապէս մարմնոյն զանազան մասերն
նեղելու չափ չ'էին սեղմեր իրենց ազանելիքն :

Իսկ այժմու գործածուած ձևերն խիստ վա-
յելուչ , այլ բնական առողջապահիկ կանոնաց
գլխովին հակառակ դրութեան մէջ է . վասն

զի տարրեր նպատակ մի ընծայուած է այսօր
զգեստուց . վայելչաձևութիւն , նորաձևու-
թիւն , ահա ասոնք են միայն պահանջուած
պայմաններն :

Զգեստներն չ'են յարմարցնէր իրենց մարմ-
նոյ ձևոյն , այլ իրենց մարմինն պէտք է յար-
մարցնել զգեստուց , որպէս զի վայելուչ ըլլայ :

Վասնդ առ'որ միանգամայն ծիծաղելի՛ կի-
րառութիւն , այս ինչ ձև զգեստն կը պահան-
ջէ մի գիշ ուռիլ , այն ինչն նիհարնալ . ուստի
կ'ստիպուի խեղճն չարչարուիլ , նեղուիլ . քիչ
ուտել , քիչ խմել , օդն չափով ծծել , որպէս
զի պայթում մի տեղի չ'ունենայ . ելլելն , իջ-
նելն , նստելն տաժանելի գործեր են իրենց
համար . վասն զի անհնար է ցաւ չ'ազգել
մարմնոյն մի կողման , սննդան սեղմուած են
զգայարանքներն , որ զանոնք շարժման վիճա-
կի մէջ դնելու համար մեծ դժուարութիւն կայ :

Յօժարութեամբ , հաճութեամբ կը տանին
այս նեղութիւններն . եթէ օտարն իրենց հա-
մար գործադրէր այս ամենն , ցատմամբ պիտի
գոչէին , « բռնութիւն , անիրաւութիւն զըր-
կանք » :

Ի՛նչ իրաւամբ զմեղ նեղել , օդն չափով տալ
զոր Աքարի՛ն առատապէս պարզեւած է աշ-
խարհի . ջրոյ մի կաթիլն զրկել , որոյ անաս-
ման տարածութիւնն պատուած է զաշխարհ ,

չլթայե՛լ, նեղե՛լ զգայարանքներն, ո՞րպիսի բռնութիւն :

Ահա ինչ որ բռնութիւն անիրաւութիւն կ'անուանեն, զայն 'ի գործ կը դնեն յօժար կամօք. համբերատար ոգւով կը տանին այս տառապանաց, խոնարհելով մտութեան մի շղթայից :

Է՞ր ձեր այդ տառապանքն նեղութիւնն, պատասխանեցէ՛ք, պճնասէ՛ր Տիկնայք: Արհամարհանաց ժպիտ մի ձեր շղթաներն կը փօթէ. սքողուն աչերէն սրամտութեան կայծ մի կը սրլանայ և բարկութեամբ կը պատասխանէք. — որպէս զի ունենամք ինչ որ արք կը պահանջեն — գեղեցկութիւն :

Արդարացի է ձեր տուած պատասխանն, բոլորովին անիրաւ չէ ձեր արական սեռին դէմ ուղղած դանդաւան : Սակայն եթէ դուք ճանչէիք ձեր յարգն ու պատիւ և բարձրացրնէիք, անշուշտ պիտի կարենայիք խոնարհեցրնել նոցա ծայրայեղ պահանջումներն, և զիրենք գոհացնել : Բայց թողո՛ւմք այս կէտն, և անգամ մի քննեմք թէ, այդ չափազանց վայելչաձևութեան, նորաձևութեան հետամուտութիւնն՝ որուն պճնասիրութիւն անուն տրուինք, կրնա՞յ մարմնոյ գեղեցկութիւնն յաւելուլ : Վասն զի կ'ընդունիմք թէ արտաքին գեղն ո՛չ նուազ հրապուրիչ է և կարգ մի հեշտասիրաց քով նախամեծար ընտրելի : Գեղեցկա-

նալու տենչն բնական է կնոջ, չ'եմք հակառակիր . սակայն գեղեցկութիւնն մարմնոյ առողջութենէն կախեալ է :

Երական գեղեցկութիւնը, մարմնոյ առողջութիւնն է . հետեւաբար ամենէն աւելի մարմնոյ առողջութեան հոգ և խնամք տանիլ պէտք է . ուտելեաց, ըմպելեաց, զգեստուց ամեն կարգի պիտոյից մասին զգուշութիւն և խնամք անհրաժեշտ է : Մարմնամարդական վարժութիւնք, առողջապահութեան սկզբանց գործադրութիւն, վերջապէս միով բանիւ ֆիզիզական դաստիարակութիւնն այդ բաղձալի արդիւնքն կրնայ յառաջ բերել :



Խիստ հազուադիւտ է որ մտաւոր բարոյական գեղեցկութեան հետ ըլլայ նաև ֆիզիգականն , այնու կիներն չնաշխարհիկ էակ մի կը լինի :

Սակայն , ինչպէս ըսինք պճնասիրութեան հետամտութիւնն այդ նպատակին հասնելոյ միջոց մի չըլլալէ զատ , ինչպէս , կը կարծեն պճնասէր Տիկիներն , ընդհակառակն այդ նպատակէն հեռացնելոյ պատճառներ յառաջ կը բերէ :

Բնաւ խարուիչ պէտք չ'է իւր վայրկենական արտաքին ձևերէն որով կը պչրին ընդհանրապէս կանայք . գեղեցկութիւնն պէտք է բնական ըլլայ և ոչ թէ արհեստական . միայն առողջապահիկ կանոններն և մարմնամարզական փորձերն կրնան արդիւնք մի տալ , անկից դուրս գործածուած միջոցներն փաստեր են . թողո՛ւմք նիւթական և բարոյական փաստերն , զորս մի քիչ յետոյ պիտի բացատրեմք . այլ առողջութեան դէմ տուած հարուածներն իսկ անհաշուելի են . զի զգեստոց հակապատշաճ յօրինուածքէն կրնան մարմնոյ տկարութիւններ յառաջ գալ . ինչպէս կուրծքի հիւանդութիւն գժուարամարտութիւն , աղեաց բորբոքում , ջղային տկարութիւն , տենդ , ջերմ , թոքախտ

և այլն որք վերջին ժամանակներս ընդհանրապաժ են :

Երբ մտածեմք թէ , կնոջ փափուկ կազմն , աւելի փափուկ հոգածութեանց և առողջապահիկ ինամոյ պէտք ունի , կրնամք հասկանալ թէ այս կանոնաց զանցառութիւնք ինչ ծանր աղետներ յառաջ կը բերեն : Դեռ անցեալներն պճնասիրութեան , այս մտութեան դժբաղդ զո՛հ մի տրուեցաւ , տասն և ութամեայ մանկամարդ մի տիկին զո՛հ գնաց . ճիշտ քիչ յառաջ մեր ըսածին պէս հազուատին անպատշատ և հակառողջարանական ձևն , իւր մարմինն չափազանց սեղմելով , իւր կենաց վախճան տուաւ :

Այս տեսակ դժբաղդ զոհերու շար մի կըրնայինք թուել հոս , բայց հարկ չեմք տեսներ . զի մեր պճնասէր Տիկիներն մեզմէ աւելի բաւ կրնան դիտնալ . թող յուշ ածեն մի անգամ իրենց կենաց մէջ ստէպ պատահած դէպքերն . առանց առողջութեան հարկաւոր եղած կերպով զգուշութիւն ընելու միայն վայելչաձևութեան , նորաձևութեան հետեւելով , անպատրաստարելի մնալով , օդոյն , եղանակին անբարեխառնութեան դէմ . քրտնելով , պաղելով , սաստիկ նեղուելով , մարմնոյն այլ և այլ մասանց արտաշնչութիւնն դադրելով , յաճախ հիւանդութեանց ճարակ կը լինին . հապա ո՛ւր

Թողումք մշտնջենական մտածումներն, որովք
 դրաուած են իրենց վայրկեաններն, հան-
 դրատութեան ժամերն . իրենց հանապազօր-
 եայ մտածումներն գրեթէ կը դառնայ միշտ
 իրենց հագուստներու վերայ, տունը, փողո-
 ցը, սեղանին վերայ ամենուրեք :

Այսօրինակ մտածումներն կը խանգարեն
 ջղային դրութիւնը մանաւանդ կանանց, որք
 աւելի հանգարտութեան և հանգստութեան
 պէտք ունին, որոց կազմն չ'ներէր չափազանց
 մտածումն :

Հաշուեմք և յառաջ երթամք թուելու հա-
 մար յաճախակի ձևափոխութեանց պատճա-
 ռաւ ծագած վնասներն ալ :

Կարծես թէ ժամանակի մեծ անջրպետ մի
 կայ անցեալ և ներկայ ժամանակին մէջ . այն
 անցելոյն համար կ'ըսեմ, որ առեն իզական
 սեռն մարմնոյ անհրաժեշտ պէտքերովն լոկ կը
 բաւականանար . սակայն մարմնոյ լաւ առող-
 ջութիւն մի կը վայելէր, այն ժամանակին յա-
 տուկ էր կարծես կորով, բնական գեղեցկու-
 թիւն, զուարթութիւն և այլն . հին սովորու-
 թեանց բնական պարզութեան, անմեղութեան
 հետ անհետացան չքացան այն ամեն առա-
 ւելութիւնքն . աներևոյթ եղան գրեթէ այն
 առողջ գէմքերն, առողջ և զօրեղ կազմերն .
 քաղաքակրթութեան բերած այս մոլութիւնն ,

պճնասիրութիւնն, թունաւոր պտուղներ ար-
 տադրեց և ընծայեց մեր Տիկնանց՝ որք փափ-
 կութեան և ճաշակի հրապոյրէն յափշտակ-
 ուած, այս անիծապարտ սովորութեանց հեշ-
 տիւ կը հետեին :

Բազդատեցէ՛ք, միանգամ անցեալն ու ներ-
 կայն մեր տեսակէտով, մեր նիւթին վերա-
 բերեալ սահմանին մէջ, և սարսափահար պիտի
 ընկրկիր ներկային մահաբեր չարեացն առաջ,
 երևակայեցէ՛ք, անցելոյն անծանօթ հիւան-
 դութեանց չար մի կայ, յորոց մի քանին յի-
 շեցինք և որք այս և ասոր նման վատթար և
 ապականիչ սովորութեանց արդիւնք են, որոց
 դարման տանիլ կը խորհի արդի գիտական աշ-
 խարհը :

Այսպէս կ'իրականայ ինչ որ ուրիշ առթիւ
 կը գոչէի թէ « Մեծ մասամբ մոլութիւններն
 են գիտութիւնը յառաջ տանողը »* :

Փոխանակ գործոյն պէտք է բառնալ պատ-
 ճառն . ուստի յորդոր կը կարդամք Ձեզ Տիկ-
 նայք, պճնասիրութեան և անկից ծագած մու-
 լութեանց վախճան տուէ՛ք, որով պիտի կա-
 րենաք բառնալ վատառողջ կենաց պատճառ-
 ներէն մին . մտածեցէ՛ք մի անգամ, ո՛չ իսկ

* « Յառաջդիմութիւն գիտութեան », բանախօսու-
 թիւն խօսեցեալ Ի Ժողովրդային Լսարանի 1879 :

յիմարն յանձն կ'առնու իւր կենաց մի օրն զհ-
 հել . յետին աղքատն պատառ մի հացի կա-
 րոտ մուրիկն իւր կենաց մի վայրկեանն միւ-
 եոններու հետ չ'իտխանակէր , և դուք կը զի-
 ջանիք մուլութեան մի զոհել ձեր զուարթ օ-
 րերն , ձեր առողջ կեանքն ձեր ապագայն .
 զգուշացէք , ոճիր մի է այդ . զի կեանքն լոկ
 ձեր ստացուածքն չ'է , եթէ այդպէս լինէր ,
 ինքնասպանութիւնն մեզք չ'պիտի համարուէր .
 ձեր կենաց , ձեր արեան վերայ , անփխտելի ի-
 րաւունք ունին Արարիչն , մարդկային ընկերա-
 կանութիւնն , ընտանիքն , ձեր զաւակներն :

Արդ՝ ամենէն աւելի ուշադրութեան պէտք
 է առնուլ այս կէտն , ըսի թէ կեանքն լոկ ձեր
 ստացուածքն չ'է , այլ նաև ձեր զաւակաց :

Եթէ մուլութեան հետեանքն միայն դուք
 կրէիք , և աղետքներն չ'ծանրանային հանրու-
 թեան վերայ , գէթ պատասխանատուութիւնն
 այնքան ծանր չ'լինէր , և թերևս անտարբերներն
 անգութներն կարենային ըսել ձեզ համար թէ
 իրենց անյազ տեսչից , անսանձ մուլութեան
 արժանաւոր պատիժն ստացան . թո՛ղ չափա-
 զանց պճնասէր չ'լինէին , թո՛ղ ճանչէին իրենց
 կենաց արժէքն , որո՞ւ փոյթ . զի այն ատեն
 ոչ ոք զձեզ մեղադրելու , դատապարտելու ի-
 րաւունք ունէր :

Սակայն բնութիւնն տարբեր կերպով սահ-
 մանած , եղանակաւորած է մեր կենաց պա-
 րագաներն . իւրաքանչիւր անհատի էութիւնն
 ուրիշի էութեան կից և անոր ազդեցութենէն
 անխուսափելի է . թողո՛ւմք բարոյական մասը
 նոյն ինքն ֆիզիզականն կրնայ մեր ըսածին
 ջինջ ապացոյց մի համարուիլ . պարզ հայե-
 ցում մի կարէ զմեզ համոզել , առանց գիտու-
 թեան խորն մտնելու և երկար քննութեամբ
 հաստատելու :

Շատ յայտնի ճշմարտութիւն մի է որ ծնու-

դաց կազմէն կախում ունի զաւակաց կազմն .
 ծնողաց մարմնոյ առողջութենէն կախեալ է
 զաւակաց առողջութիւնն . կրնամք աւելի յա-
 ուածանալ և ըսել թէ ծնողաց բարոյական ազ-
 դեցութենէն իսկ անխուսափելի է զաւակաց
 ֆիզիզական կազմութիւնն , ծնողաց բարոյա-
 կան հանդամանքներն իսկ կը փոխանցին իրենց
 զաւակաց : Ահա այսքան է իրենց ազդեցու-
 թիւնն զաւակաց վերայ . թողումք բացառու-
 թիւնքն որք անակնկալ պարագաներէ և դէպ-
 քերէ կրնան ծագիլ :

Բաց սուտել մօրն ազդեցութիւնն հեղի-
 նակութիւն ունի , իննամսեայ միջոցին մէջ մօրն
 կրած ֆիզիզական և բարոյական տպաւորու-
 թիւններն կը ներգործեն իւր սաղմին վերայ .
 այնպէս որ , մի անտեղի շարժումն , քայլն կա-
 րէ իւր սաղմին վնասել , և նորա ճակատա-
 դիրն կազմել , տձև . հաշմել ազագայ ման-
 կան կազմն :

Բարէ , մարդկային ճակատագիրը ոչինչէն
 կրնայ այլափոխիլ : Արդ՝ սա՛ կրնաք երևա-
 կայել որ , եթէ մօր առողջութիւնն արդէն
 խանգարուած ըլլայ պճնասիրութեան և այլ
 դէշ սովորութեանց պատճառաւ ինչ կը լինի
 իւր և իւր մանկան վիճակն , որք շատ անգամ
 այս մոլութեան դժբաղդ զոհերն կը լինին :

Մարդ տեսնելով այն պճնասէր Տիկիներն

որք նեղ զգեստուց , ազանելեաց տակ կը ջա-
 նան նիհարցնել իրենց կազմն , կը տանջեն ի-
 րենց թոքերն արգանդն , դժուարաւ շնչառու-
 թիւն ընելու չափ . մարդ տեսնելով , կ'ըսեմ՝
 կը սարսափի՛ , երևակայելով որ հոն էակ մի պի-
 տի կազմակերպի , սաղմն գոյութիւն պիտի առ-
 նու , աճում զարգացում պիտի ստանայ :

Ի՞նչ վիճակ կ'ստանան այսպիսի մայրերէ
 սերեալ զաւակունք . բազդատեցէ՛ք արդի սե-
 բունդն հին սերնդեան հետ , ի՞նչ անհուն տար-
 բերութիւն . նկատեցէ՛ք հին սերնդեան պատ-
 կերներն , տեսէ՛ք , ի՞նչպէս գեղեցիկ , կայտառ-
 աչխոյժ են , առողջութեան մէյմէկ տիպար-
 ներ են , հաշուեցէ՛ք իրենց վարած կենաց ե-
 զանակն և տեղութիւնն . դարձուցէ՛ք ձեր
 ակնարկն արդի սերնդեան տխուր վիճակին .
 դարկատիպ գեղնութիւն մի դիմաց վերայ ,
 գունաբեկ շրթներ , նիհար , վտիտ կազմու-
 թիւն մի , որ հազիւ փափուկ առողջապահիկ
 կերառութեամբ կրնան ապրիլ , այն ալ բժըշ-
 կաց շնորհիւ , որոց թիւն օր ըստ օրէ աճելու
 վրայ է ֆիզիզային ախտերն դարմանելու
 համար — չ'ըսեմք աւելի սաստկացնելու , — զի
 շատ անգամ բժշկաց սոգիտութիւնը այս աւե-
 բումները բազմացուցած , և դեղոց յաճախակի
 գործածութիւնը տկարացուցած է մարմինն :

Մարդ երևակայելով ազագայ սերնդեան

վիճակն , անհնար է որ գութ և կարեկցութիւն չ'զգայ այն թշուառ արարածներու վերայ , որք անպարտ զոհերն են ներկայ սերնդեան ունեցած մոլութեանց և ապականութեանց :

Եթէ ունենայինք վիճակագրութիւն մի , պիտի կարենայինք ցոյց տալ այն տարբերութիւնն որ կայ անցեալ և ներկայ կենաց տեւողութեան մէջ . համեմատաբար կենաց տեւողութիւնն հետզհետէ կը կարճանայ , որոյ գլխաւոր պատճառներէն մին է կանանց պըճնասիրութիւնն , որ թէ ուղղակի և թէ անուղղակի կ'ազդէ , և արական սեռին մէջ գանուած մոլութեանց աղբիւրն է . մոլութիւններ , որք նոյնպէս ֆիզիզային անկման կ'առաջնորդեն :

Խեղճ , ողորմելի էակներ , որք խորշակահար ծառի մի ազգուն տերևոց նման ոտնակոխ կը լինին , տարածամ կը հրածարին կեանքէ . եթէ սուղ միջոց մի ապրին , այն ալ աստերով , հիւանդութեամբ տանջուելով :

Պո՛հ էք դուք , ո՛վ պճնասէ՛ր Տիկնայք , երբ սերունդ մի ամբողջ ձեր անսանձ մոլութեան , անդուսպ փափաքներու ովկիանոսին մէջ կը խեղդուի չարաչար . է՛հ , չ'եմք կարող իրականութիւնն չ'տեսնելու չափ կոյր ըլլալ և չ'գոչել առ ձեզ պճնասէ՛ր Տիկնայք , սերունդ մի կ'ապականէք , ապաղայ մի կ'սպաննէք , ոճի՛ր կը գործէք :

Թող սարսուի՛ն ձեր խիղճերն . մեք զձեզ գթասիրտ և խղճահար էակներ կը ճանչեմք , գթացէ՛ք նախ ձեր վերայ և ապա ձեր զաւակայ , ընկերականութեան վերայ . մտածեցէ՛ք թէ ի՛նչ մեծ գրկանք անիրաւութիւն մի ի գործ կը դնէք երբ զձեզ և միանգամայն ձեր զաւակներն կ'սպաննէք :

Ձեր զաւակներն , ձեր մոլութեան պատիժն կ'ստանան , ձեր ոճիրը կը քաւեն նոքա . եթէ չ'սթափիք տակաւին և չ'դարմանէք այս չարիւրիքը , անշուշտ նոցա արդար անէ՛ծքն ու դատապարտութիւնն պիտի լինի ձեզ բաժին :



Պճնասիրութեան ֆիզիգապէս ունեցած վընասներն բացատրեցինք համառօտիւ . ցոյց տամք արդ նիւթապէս պատճառած աւելումներն . վասն զի միայն ֆիզիգականն չէ մարդուս կենաց պայմանն , այլ նաև տնտեսական և բարոյական օրէնքներն մարդկային կենաց զարգացման և ապահովութեանն համար հարկաւոր են :

Խիստ իրաւացի է այն ռամկական դրոյցն թէ առողջութիւնն թանկագին հարստութիւն մի է . սակայն լոկ առողջութիւնը չբաւէր մարդոյն երջանկութեանն համար , ի՞նչ օգուտ և ի՞նչ շահ , երբ կը զրկուի գէթ չափաւոր հարստութենէն , ո՞չ ապաքէն աւուր պարէնն իսկ հայթայթելոյ համար դրամի պէտք ունի , և այն ատեն կեանքն իրեն համար տանջանք մի կը լինի և մահն փրկութիւն . կենաց պահպանութեան և առողջութեան համար դրամն հարկաւոր է ինչպէս նաև բարոյական զարգացման և մտքի կրթութեան , դաստիարակութեան , վերջապէս ամեն ժամանակ և ամեն պարագայի մէջ դրամի պէտք ունիմք , ո՞չ ոք կրնայ մերժել նորա օգուտն մինչև իսկ ծայրայեղ իրեւելած անհատ մի եղած լինի . միջոց մի է այն որով կրնամք մարմնաւոր , մտաւոր

պէտքերն պահարել . սակայն այսու ամենայնիւ կը դատապարտեմք այն նիւթապաշտներն , որք դրամն իբր իրենց կենաց նպատակն կ'ըմբռնեն և լպիրշ համարձակութեամբ կ'ուզեն ճանչցնել դրամն իբր պատիւ , իշխանութիւն և այլն : Այսպէս ճանչելով դրամի օգուտն , մեր գործն թերի պիտի լինէր եթէ ուշադրութեան չ'առնուինք կէտ մի որ խիստ մեծ առնչութիւն ունի մեր նկարագրած նիւթոյն հետ :

Տիկնանց պճնասիրութիւնը շուայլ ծախուց կ'առաջնորդէ , շուայլ ծախքերն ընտանեաց նիւթապէս և հետևաբար շատ անգամ բարոյապէս կործանման տեղի կը տան :

Ըստ այսմ , գլխաւորաբար մեր ուշադրութիւնն կը դառնայ դրամն գործածելոյ եղանակին վերայ , որ մասն է առտնին տնտեսութեան , կը խոստովանիմք սակայն որ բազմութիւ ընթերցող պիտի ունենայինք եթէ փոխանակ դրամն գործածելու եղանակին վերայ գրելու , զայն շահելու եղանակին վերայ գրելինք մանրամասնաբար . բայց պէտք է գիտնալ որ դրամն ծախսելու , գործածելու եղանակը գիտնալն զայն շահիլ ըսել է . դրամ շահելու գլխաւոր միջոցներէն մին է դրամը օգտակար կերպիւ գործածել . այլ ո՞րքան դժուարութիւնք կան դրամն օրինաւորապէս գործածել .

լու եղանակին մէջ , անսպառեիլի դանձ մի ,
 անսահման հարստութիւն մի պէտք է յագե-
 ցնելոյ համար այն խղճերն՝ որք ամեն օր ա-
 մեն ժամ կը ծնանին ՚ի մեզ և զորս գոհացնե-
 լու չեն զօրեր հարստութիւնքն ընդհանրա-
 պէս . իսկ որքան դժուարին , այնքան ար-
 դիւնաւոր և օգտակար է մեզ համար , զի շատ
 պարագայից մէջ փորձն կրնամք առած լինիլ
 թէ ներկային մէջ փոքր զոհողութիւն մի ա-
 պագայ յաջողութիւն մի արտադրած է , ան-
 նըչան փոքրիկ դրամներու խնայողութիւնն ,
 դրամագլուխներ կազմած , հարստանալոյ մի-
 ջոցներ յառաջ բերած է . ի՛նչ փափաքներ որ
 զոհեցինք , անոնցմէ աւելի մեծերն կրնամք
 գոհացնել ապագային մէջ :

Այս կերպ զոհողութեանց օգտակարու-
 թիւններէն մին ալ այն է , որ խնայողութեան
 կը վարժիմք և դժուարութիւն չեմք կրէր դի-
 մադրելու ըղձից փափաքանաց , որք անընդ-
 հատ կը գան և կը փաղաքչեն մարդկային հա-
 ճոյքներն . պէտքերն օր ըստ օրէ կը նուա-
 զին , չափաւոր հարստութիւնք կ'աճին , դրա-
 մագլուխներն կը բազմապատկին . բայց ընդ-
 հակառակն երբ առաջին անգամ թոյլ կը տըր-
 ուի այդ փափաքանաց , այն ատեն դժուար
 բութիւնքն կ'աւելնան , միոյն կը յաջորդէ այ-
 լոյ շար մի , որք հետզհետէ պէտքերը կ'ա-

ճեցնեն , յ'սրչափ պէտքերն գոհացուին այն-
 քան միջոցներ կը պակասին , հարստութիւններ
 կը կործանին , գրամագլուխներ կը ջնջուին ,
 ընտանիքներ կը կործանին և բարուց ապակա-
 նութեան պատճառներ յառաջ կը գան . և
 այս ամենուն գլխաւոր պատճառն առաջին
 փափաքն չզուպելն է :

Այսպէս ահա ընտանեաց կործանման պատ-
 ճառներն մեծ մասամբ ծախուց օրինաւորու-
 թեան վերայ չհակելն է . որք արձակ համար-
 ձակ կը թողուն զիրենք հաճոյից հոսանքին ա-
 ռաջ , առանց ապագայն մտածելու , ներկա-
 յին հաճոյքներովն կը բաւականանան : Տնտե-
 սագիտութեան սկզբանց համաձայն չեն կա-
 նոնաւորեր դրամին սպառելոյ եղանակներն և
 յանօգուտս կը վատնեն զանոնք :

Օրինաւոր են միայն այն ծախքերն՝ որ կե-
 նաց պահպանութեան համար անհրաժեշտ
 հարկաւոր են :

Օրինաւոր են այն ծախքերն՝ որք անհատին
 ունեցած վիճակին կը յարմարին , և նպաստա-
 ւոր են անհատական և հանրութեան բարոյն
 նիւթապէս կամ բարոյապէս :

Իսկ պէտք է զգուշանալ այն ծախքերէն՝
 որք աւելորդ են և վնասաբեր , և զորս կ'ընէ
 մարդ անփոհհանութեամբ :

Պճնատիրութիւնն որ քիչ ժամանակէ ՚ի վեր մուտ գտած է ընտանեաց մէջ և սակաւ ժամանակի մէջ ընդհանրացած , այս մուլութեան համար կ'ըսեմ վատնուած գրամներն՝ այն ծախուց կը վերաբերին , որք ողջմտութեան և խոհականութեան հակառակ են և աննպաստ հասարակաց և անհասական բարոյն . վասն զի ընտանեաց դիւրակեցութիւնը կ'աւերեն , մեծամեծ գրամագլուխներ կը փճացնեն :

Գտնուեցան նորաձևութեան չափազանց հետամուտներ, որք ճաշակին փափկութիւնը և վայելչութիւնն յառաջ բերելով, ուղեցին պաշտպանել այս մուլութիւնն առանց հետևանաց վերայ մտածելու , առանց մտածելու թէ ճաշակի չափազանց փափկութիւնը մութացկանութեան կ'առաջնորդէ :

Չեմք դատապարտեր նորաձևութիւնն, ըստ որում յառաջդիմութեան և ճաշակի ազնուացման մի նշան է , սակայն իւր չափազանցութեան մէջ մուլութիւն մի է . մտածել պէտք է թէ շարունակաբար զգեստուց պարբերական ձևափոխութեան համար ի՞նչ ահագին՞ դուրմարներ կը վատնուին , մանաւանդ անոնց համար որք թանկագին կերպաններէ և մետաքսեղէններէ կ'ուզեն շինել իրենց զգեստն :

Իւրաքանչիւր տարուց , իւրաքանչիւր եղանակի համար հնարուած զգեստներն տարբեր ձևեր կը կազմեն . սովորութիւն մի դարձած է որ ամեն եղանակի սկզբան մի նոր ձև ւափոխութեան կ'սպասուի . զոր ոչ թէ ճաշակի փափկութիւն այլ իգական սեռի փոփոխանմանութեան նշանն կը համարեմք մեք ; ուսկից օգուտ կը քաղեն խել մի խարբայք և շահանդիւրք ; որք մի քիչ այլափոխելով ձևերն կը յաջողին մեծափարթամ այլ անհաստատամիտ Տիկնանց ձեռօք օրինակն ընդհանրացնել և շորթել գրամներն : Նորանոր յօրինուած ձևերն առաջիններէն մեծ տարբերութիւն մի չեն կրեր , և խիստ շատ անգամ նախորդներն իրենց յաջորդներն կը դերազանցեն վայելչութեան մասին : Սակայն հարուստ նորասէրներն մեծ խնամով կ'ընդօրինակեն և հրապարակի , հասարակաց զբօսավայրերու մէջ կը ձեմեն ապուշներու միամիսներու նայուածքն գրաւելոյ համար . իսկոյն օրինակն կը ծաւալի , և չափաւորներն մեծ դժուարութեամբ կ'ստիպուին համակերպիլ ընտանեաց հանդստութեան խաղաղութեան վրդովման տեղի տալով շատ անգամ . իսկ նոքա որք ազբատ են և անկարող կը հարկադրին տանց անկիւնն մնալ զբրկուելով հանրային զբօսանքներէ , երկնչելով ; զի մի դուցէ գրացոյն , օտարին ծաղրն շար-

ժեն իրենց հնաձև համեստ հագուստներովն :

Բայց վերջապէս կին է , չկարէ տոկալ այպանաց , կ'ուզէ մասնակցել . ուստի կը գրկուի յօժարակամ անհրաժեշտ մնունդներէ , կը գրկէ նաև իւր զաւակն , կը ճգնի , կ'աշխատի ճար ճարակ կ'ընէ , դրամ դրամի քով բերելով , կը յաջողի վերջապէս գեղապաճոյճ զարդարիլ և մեծափարթամ հարուստ մի երեկ . իսկ իւր զաւակն կ'ամ եղբայրն բոկոտն կը շրջի փոշոյններն պատառասուն գդեստներով , ձմեռնաշին սաստկաշունչ քամիին ազդեցութեան ներքև կը սարսուայ խեղճն , ձեանց հատիկներ անձրևի կաթիլներ կ'անցնին կը թափանցեն իր ըզգեստներէն ներս և կը սառի թշուառն , այլ մայրն կ'ամ քոյրն կը շարունակէ իւր ընթացքն անդթարար , խելելով իւր սրտին մէջ մայրենի գորովոյ և համակրութեան զգացումներն :

Իւր զաւակն հակապատկեր մի է իրեն , իր զաւակն յետին մուրկին զաւակն է , իսկ ինքն մեծափարթամ հարուստ մի . զաւակն իւր փառամուրթեան արատն է . այլ ևս ո՞վ կը մտածէ նորա բարգաւաճման , կրթութեան համար , որ մօր նուիրական պարտն է . մինչև իսկ նորա կենաց մնունդն չ'է կարող մատակարարել . եթէ դիպուածով հիւանդանայ , չարաչար կը մեռնի առանց դեղոյ և դարմանի . զի գիպաց գէմ'նախազգուշութեան միջոյններէն զրբ-

կուած է . սրբան նուաստացած է կինն , նուաստ քան զանասուն որք իւրեանց ճագերն բուծանելոյ համար կը մոռնան զիրենք և չարաչար զրհուրթեանց կ'ենթարկին բնական սիրոյ ներշնչմամբ : Ահա այսպէս բնութեան օրէնքներն իսկ խանդարեցաւ ց'որչափ արմատացաւ այս մուրթիւնն կանանց սրտին մէջ :

Աետք է յիշել որ միայն հագուստի համար չ'է վատնուած դրամներն , այլ նաև կահ կարասեաց տան զարդուց համար , որք բնականաբար յառաջ կը դան պճնասիրութեան , աւելորդ զարդուց և չքասիրութեան հետամուրթեանէն . զբօսանքնե՛ր , երեկոյթ անօգուտ անպետ ծախքեր միմեանց կը յաջորդեն , քսակներ կը պարսպուին , գանձերն կը դատարկանանան և հարստութիւնն կործանելու մօտ կ'սկսին մտածել իրենց շուշլ ծախուց վերայ , կ'ողբան իրենց ըրած կորուստներն և անագան հաշուի կ'առնուն անխոհմարար վատնուած դրամներն , որք մեծ գումար պիտի կազմէին , գումար մի որով պիտի կարենային ապագայ մի երաշխաւորել իրենց և իրենց զաւակաց կեանքն ապահովել , եթէ ինայոգութեամբ ապրէին :

Բայց չատերն իրենց հարստութեան և բազդին վտահելով ինայոգութեան օրինաց չ'են անտար . սակայն կը հարցնեմք որ , եթէ այսօր

բաղդէին շնորհներն կը վայելեն , նորա պիտի
կրնան բաղդէին հարուածներէն ալ զերծ մը-
նաբ : Չե՛մք տեսներ թէ ի՞նչ մեծամեծ հարուստ-
ներ , ազնուականներ ժամանակին տագնապ-
ներովն աղքատացած իրենց բարեկեցիկ վի-
ճակն կորուսած են և այսօր հասարակ մար-
դոց վիճակին կարօտն կը քաշեն . ս՛վ կրնայ
երաշխաւորել իրենց հարստութիւնն . լաւագո՞յն
չէ զանձն երաշխաւորել , պաշտպանել բաղ-
դէին յեղաշրջմանց դէմ , խնայողութեամբ ,
պարկեշտութեամբ ապրելով . աւելի մեծ չէ՞
պճնասէ՛ր Տիկնայք , ապագայ նախապինքն
անպատուութիւնն երբ առ ՚ի չգոյէ դրամի ,
կ'ստիպուիք վերջ տալ պճնասիրութեան , ա-
ւելի ծանր չ'է՞ ձեզ համար , կ'ըսեմք , դո՛ւք
որ վարժուած էիք կամնապաշտութեան , փա-
ռասիրութեան , պճնասիրութեան , ո՞չ ապա-
քէն դրացեաց , օտարաց ծագուն կ'ենթարկիք ,
որք ձեր անկման վերայ անկարեկցաբար կը
բերկրին կանանց յատուկ նախանձոտութեամբ :
Ըսէ՛ք մեզ , հազար անգամ չ'էք զղջար ու չ'էք
փափարիր որ նախապէս ձեր առաջին փափա-
քը զսպէիք , և յետինն այսպէս տխուր վախ-
ճան մի չ'ունենոր : Առ դիտեցէ՛ք շոյլ մար-
դուն կենաց վախճանն . շոյլ մարդն , նախա-
ճաշիկն առատութեամբ կ'ուտէ , ճաշն աղքա-
տութեամբ իսկ ընթրիքն խայտառակութեամբ :

Ա՛ւ ուշ դրէք , Տիկնայք , եթէ այսօր անօ-
գուտ և անարժէք իրերու համար դրամներ
կը վառնէք , վաղն օգտակարներու և կարևո-
րաց համար դրամ չ'պիտի գտնէք , այսօր ա-
նօգուտ բաներ կը գնէք վաղն ձեր կենաց ան-
հրաժեշտ պէտքերն հոգալոյ համար կարևոր
կահ կարասիներ վաճառելու իսկ կը հարկա-
գրիք . ձեր դրամով ապագայ թշուառութիւնն
կը գնէք . ձեր հայն արտասուաց մէջ թաթա-
խելով հաղիւ կրնաք կենաց սնունդն մատա-
կարարել . ա՛հ , ս՛րբան զրկանք կը կրէք ար-
դեօք խեղճ կանայք , կ'ողբաք ձեր նախկին
կենաց վերայ , կ'որոնէ՛ք զայն այլ ՚ի զո՛ւր .
հազա՛ր ափսոս , բիւր աւազ , անագան զգացիք
Յրանքինի խօսքի ճշմարտութիւն թէ « Բեհեղ-
ներ ու ծիրանիներ խոհարանի կրակը կը մա-
րեն » :



Արդի քաշաբակը թու թեան մէջ կան և կ'երևին բարոյական իմաստասէրք , որք ուզած են աարածել թիւրամիտ սկզբունքներ , զորս պէտք է ինամուլ վննել և ոչ թէ շըրտ երեակայութեամբ փարել , անձնասուր լինիլ այդ սկզբանց՝ որք մեծ մասամբ շահախնդրութեանց և ինչ ինչ նկատողութեանց արգասիք են : Այս կարգէն կրնամք համարել , ինչ որ օտարազգի անտեսաբէտք ոմանք քարոզած են և որոյ թարգման կը հանդիսանայր մերազգի և կեղեցականներէն մին :

Պճնասիրութիւնը յատկայնել կ'ուզեն միայն հարուստ ընտանեաց , նոցա սեպհական մուլութիւն մի ընել և կը կարծեն թէ այս կերպով պճնասիրութիւնը օրինաւոր կը լինի , զի աշխատութիւն կը ծնանի , պերճանքն աշխատութիւն կը յաւելու :

Նախ պէտք է գիտնալ որ ճիշդ այդ եղանակաւ սկսած է պճնասիրութիւնն տարածում գտնել . հարուստներու դասն առաջին անգամ օրինակ ընծայած է ընտանեաց . զի անհրնարին է գապել հարուստին նմանելոյ տենչն , մանաւանդ կանանց՝ որք աւելի շքոյ և պերճութեան հետամուտ են . առաջին անգամ հարուստներն եղած են որ շոտայլութեան ա-

պականութեան դաս մի տուած են ընտանեաց :

Երկրորդ , միթէ այդ հարուստներն պիտի կրնան ֆիղիգային և բարոյական անկումներէ զերծ մնալ . ոչ ազաբէն մտքի կատարելութենէ ալ պիտի զրկուին այն ատեն , զի նորաձեւութիւնն նոցա զգեստուց պէս նոցա կրթութիւնն ևս յինքն պիտի դրաւէ . քանի որ ոչ որ կրնայ իւր ունեցած վիճակին ապահովութիւնն ունենալ , լուաղո՞յն չէ միշտ ինայողութեամբ ապրիլ , և այսու դարձեալ կրնայ և աւելի ապահովութեամբ հանրութեան ծառայել , բարենպատակ հաստատութեանց , գործոց նպաստելով և այլն :

Երրորդ , հաշուական ճշմարտութիւն մի ալ սա է որ , եթէ պերճանքն անօգուտ և անարժէք իրեր արտադրող դործաւորաց թիւն կը շատցնէ , ինայողութիւնն ալ օգտակար և կարևոր արտադրութիւններ և աշխատութիւններ յառաջ կը բերէ և կը բազմապատկէ :

Ինչ գեղեցիկ և օգտակար արհեստներ , և ճարտարութիւններ կան , որք քաջալերութեան , ծնունդ առնելու համար կ'սպասեն . մինչդեռ այս տեսակ անօգուտ , անարժէք իրերու համար կը վատնուին մեծագումար դրամներ որք կրնային ճարտարութիւն մի ծնանիլ , մի նոր գիւտ , արհեստ , աշխատութիւն մի քաջալերել , մինչդեռ չնչին բաներու համար

ծախսուած դրամներն անօգուտ արտագրողայ թիւն կը յաւելու . և մուլթիունք կ'աճին զի քաջալերութիւն կ'ստանան :

Մասնաւորապէս մեր ազգին համար խօսելով, որ դեռ շատ մի անհրաժեշտ կարևորագոյն պիտոյից կարօտ է, և չկրնար զայնս հայթայթել դրամական անձկութեանց պատճառաւ : Արժարանք՝ որք արդէն սակաւթիւն են, բարոյապէս աւերակ վիճակի մէջ կը մնան և բարեկարգութիւնք չեն գործադրուիր առ ի չգոյէ դրամի . մինչդեռ ձեռքն կամ վարսավիրայն կամ ասոնց նման աշխատաւոր մի քաջալերութիւն կ'ստանայ . դաստիարակն, դասախօսն, ընկերային մարմնոյն բարձր, պատուականագոյն մասն իւր օրապահիկն հազիւ կրնայ հայթայթել . այս պատճառաւ արժանիք տաղանդ ունեցող դաստիարակք, դասախօսք կ'սկսին յուսահատիչ, լքելչ, ասպարէզէն նահանջել և ասպարէզն կը թողուն կարգ մի ապիկարներու :

Խմբագիրք, մատենագիրք անօր և անօր նական առանց քաջալերութեան կ'ստիպուին չքաւորութեամբ ապրիլ սուղ ժամանակ մի, և յետոյ ասպարէզէն կը քաշուին ձեռնունայն . զի ո՞վ կ'ընթեռնու կարևորութիւն կը տայ թերթերու մատենաներու, մինչդեռ նորաձեւութեան պճնասիրութեան վերաբերեալ խօսակ

ցութիւնք Տիկնանց միտքն գրաւած են, և միջոց չ'ունին իրենց ուշադրութիւնը ուրիշ առարկայից վերայ դարձնելու :

Որքան յիմար ըլլալու է այն գրավածառն, կամ ցրուիչն որ այս տեսակ պճնասէր Տիկնանց խմբին մէջ մտնելով խոնարհաբար ըսէ իրենց, «Տիկնայք, ահա ասիկ մի թերթ կամ մի գիրք, որ ընտանեաց մուլթիւններն կը նկարագրէ և պճնասիրութեան վնասներն ցոյց կը տայ, ահա ասիկ մի ուրիշ մատեան որ մանկանց համար առողջապահիկ հրահանգներ կը տայ, ձեզ համար կարևոր են, գնեցէ՛ք մի հատ» ծաղրական մի ժպիտ կ'ընդունի իբր պատախան . զի կամ այս տեսակ նիւթոց կարևորութիւն չ'են տար, գուեհիկ անարդ մտածումներով կ'անցնեն իրենց ժամերն, բարոյական մի էակ լինելէ դադրած են . և կամ անօգուտ իրերու մխած լինելով իրենց դրամն, գնելու կարողութիւնն չ'են ունենար :

Ահա այս կերպով անկարևորներու համար դրամներ կը վասնուին, կարևորներն քաջալերութենէ կը զրկուին, այս պատճառաւ մուլթիւնք կ'աճին, զայնս դարմանող միջոցներն կը պակասին, ընտանիքներն կ'աղականին : Իսկ եթէ կինն խնայողութեամբ ապրէր, մտաւոր և բարոյական կատարելութիւն ստանալոյ պէտքն պիտի զգայր, նիւթապէս լաւագոյն

վիճակ մի սխտի ունենար . յ'օգուտ և ՚ի շահ
ընկերականութեան :



ԳԼՈՒԽ ԺԵ .

Անոջ մի անտեսութիւնն տան զարդն է , առն
պտակն և զաւակայ ապագայ կեանքն :

Շուայլութեամբ իւր հայրենական հսկայ ժա-
ռանգութիւնն վատնող մի երիտասարդ , տա-
կաւին մի գումարի տէր էր , և կ'ուզէր ազնը-
ուատոճմ հարուստ ընտանիքէ կլին առնուլ ,
որպէս զի իւր անկեալ վիճակը վերականգնէր .
ձեր երիտասարդ բարեկամ մի , այս տեսակ
հարստութիւններ ձեռք բերելու նպատակա-
ւեղած ամուսնութեանց տխուր հետեւութիւն-
ներն նկարագրելէ զկնի , յարեց թէ հաշուոյ
մէջ ալ կը սխալի « եթէ կ'ուզէք , ըսաւ , ձեր
նախկին հարստութեան տէր լինիլ , գտէ՛ք մի
կին որ ամեն բարոյական կատարելութիւն ու-
նենայ մանաւանդ անտեսագէտ , խնայող լի-
նի , քանի որ դուք շուայլ մի էք » . բարեմիտ
և խոհեմ երիտասարդն մի տարի յետոյ լա-
ւագոյն վիճակ ստացաւ , զի իւր բարեկամին
խորհրդոյն անսաց . ս'ըբան երախտագարտ է
արդեօք հիմայ :

Անոջ մի խնայողութիւնն բարիք մի է ընկե-
րականութեան համար . զի ընտանեաց վիճակն
կ'ապահովէ և ազգին հարստութեան տարեր-
քը կը հիմնէ . իսկ եթէ շուայլութեամբ մնսէ
գրամներն աւելորդ ծախուց , զարդատիրու-

թեան , պճնասիրութեան համար , ապագային ցաւալի վիճակ մի կ'առնու , իւր յի թաւկան վիճակն կը տապալէ կը կործանէ , այլոց գթասարտութեան , ձեռնտուութեան վերջապէս ողորմութեան կը կարօտի :

« Տնտեսագէտ մարդն , կ'ըսէ Ատամ Լամիթ իւր խնայողութեամբ դրամագլուխ մի կը հաստատէ խումբ մի թոշակաւոր արհեստագիտաց ապրուստին համար , իսկ շուայն դատարկութեան կը բաշխէ այն դրամներն զորս իւր հարց սակաւապետութիւնն , տնտեսութիւնն արուեստի , ճարտարութեան նուիրած էին . բարեպաշտական հաստատութեան մի դրամներն պիղծ գործածութեան կը նուիրէ » : Ամեն շրջալ այր կամ կին հասարակաց թշնամի է , որ հանճարեղ աշխատութեան շահերը կը պակսեցնէ . իսկ ամեն տնտես մարդ իբրև ընկերութեան բարերար պէտք է նկատուի :

Խնայողութեամբ կրնամք մեծամեծ առաքինութիւններ գործել , մեր պարտքերն ճըշգիւ կատարել , կրնամք հառարակաց օգտակար ձեռնարկութեանց նպաստել , կրնամք նմանեաց բարիք ընել , մանաւանդ կրնամք մեր անձին բարեկեցութիւնն ձեռք բերել , և այսու զերծ կը մնամք շատ մի մուլութիւններէ :

Նա՛ որ շուայլութեամբ իւր դրամներն կը վատնէ , բնականաբար իւր բարեկեցութիւնն

կը խանդալի , կը հարկադրի շատ մի միջոցներու դիմել , առանց ընտրութեան , իւր ապրուստն գտնելոյ համար . օրինաւոր ճանապարհէն կը խտորի , ստախօսութեամբ , յափշտակութեամբ նենդութեամբ , խարդաւանօք վերջապէս զանազան մուլութեամբ իւր կենաց պիտոյքն հայթայթելու կ'ստիպուի :

Յիրաւի շատ պարագայի մէջ այդ նչին մետաղը ԴժՅԱՂԴԱՅԱՐ կրնայ շատ մի մուլութիւններէ զմեզ ազատել . աղքատութիւնն , թըշուառութիւնն , ոգեպահիկ պիտոյքներէ զըրկումն , կրնայ բարոյական անկման առաջնորդել :

Խնայողութեան գլխաւոր արդիւնքներէն մին ալ այն է , որ զմեզ սակաւապետութեան կը վարժեցնէ և անհատին ունեցած դրամագրլուին կը տանապատկէ :

Աւստի պէտք է որ կինն խնայող , տնտեսագէտ լինի , զի նորա ձեռաց յանձնուած է տան մատակարարութիւնն , որ ըստ իւր հաճոյից և կամաց կրնայ դիւրել կամ դժուարացնել ընտանեկան ծախքերն :

Ի՛նչ պատճառաւ ընտանեաց ծախքերն հետըհետէ կը բազմանան , ց'որչապի կ'աւելնան դրամական անձկութիւնքն : Վասն զի համեմատաբար կ'աւելնայ կնոջ պճնասիրութիւնն , զարդասիրութիւնն , նոյն համեմատութեամբ կ'աւելնայ նորասիրութեան եռանդն , անոր կը

յաջորդէ փառասիրական սի՛ն ցոյցեր , երեկոյթք , շքեղ հանդէսներ , պերճապաճոյճ սրահներ և այլն . սոցա ամենքն կ'ընդարձակեն տան ծախքերն , որք բնականաբար պիտի նուազէին վաստակոց շահուց նուազմամբ , եթէ կինն իւր տենչանայ զոհել լուսագոյն չ'համարէր ընտանեաց երջանկութիւնն , կամքն , պատիւն :

Զի ի՛նչ կ'ըլլայ հետեանքն , աստիճանաբար կը խոնարհի կինն դէպ յ'անդունդ , նիւթապէս աղետալի վիճակ մի կ'ստանայ , չքաւորութիւնն հետզհետէ կը տիրէ . դրամագլուխն ոչնչանալէ յետոյ կ'ստիպուի անհրաժեշտ պիտոցից կարօտն քաշել . բունն տապնապ մի գինքն կը պաշարէ , երբ ներկայն անցելոյն հետ կը բաղդատէ . իւր վիճակն զգալի ընել չ'տալոյ համար , ամեն բան յանձն կ'առնու , կարևոր կահ կարասիքն վաճառելու իսկ , պճնասիրութեան յագուրդ տալոյ համար , որպէս զի հասարակաց ծաղուն առաջ չ'չիկնի չ'չառագունի թշուառն . հոմանեաց մի սլար գինքն կը շրջապատեն և անոր անկումէն օգուտ քաղել կ'ուզեն . այլևս վրդովեցաւ ընտանեաց խաղաղութիւնն . նախանձն , ատելութիւնն , անհաւատարմութիւնն կը գան հետզհետէ բարոյապէս կործանել ընտանիքն : Ո՛հ , իցիւ թէ եղած չարիքն դարմանել խորհէր կինն , անմիջական զղմամբ : Սակայն քայլ առ քայլ յառաջ

կ'ընթանայ . իւր սովորութիւնքն բնազդով դարձած են իրեն , ամեն միջոց կ'սպառուի և կը հարկադրի սլարտըով գնել ոչ միայն աւելորդն այլ նաև կարևորն , անհրաժեշտն աստիճան առ աստիճան կ'իջնէ մտլութեանց ստորերկրեաց մթութեան մէջ , հոմանինե՛ր և պարտատէրնե՛ր միանդամայն զինքն կը պաշարեն , մի՛ն կը հրապուրէ , մի՛ւսն կ'ստիպէ . փափով , տկար էակ , այլ ևս չ'կարէ տոկալ այս դրժբազդութեանց , սպիտակափայլ շուշանիկի նման կը խոնարհի իւր ճկուն բունին վերայ , իւր աչերն սեւեռած անդնդոց վերայ , հոն կ'ուզէ անհետանալ , միանգամ ընդ միշտ վախճան տալ իւր ցաւալի կենաց . սարսափահար յետս կը նահանջէ այն ճիւղին առաջ որ 'ի խաւարի կը յառաջանայ , և լպիրշ յանդգնութեամբ , հրէշային խնդումով կը պահանջէ . . . ամեն միջոց սպառած է . միայն միջոց մի կը մնայ . . . կը խոնարհի այն անագորոյն պահանջմանց առաջ և սոսկալի ոճի՛ր մի կը գործէ , կը ծախէ՛ իւր պատիւն . . . ա՛հ , թշուառութիւն և անկու՛մ :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ուր կը գիմէք այսպէս մոլորեալ կանայք , ուր մղեցին զձեզ ձեր անյագ կիրքն , ձեր զարգասիրութեան փառասիրութեան սեննն . սոսկալի անս'են մի կը տայ ձեզ այժմ ընկերականութիւնն , անկարեկից ոգւով կը թողու զձեզ այն վհին մէջ ուր գլորեցաք , և գայթ 'ի գայթ կը սուղիք դէպ 'ի խորը . ահաւոր անուն մի կը ժառանգէք , և այդ անունն , այլևս այդ աղարան անջնջելի է , գերեզմանի կափարչի նման սառնապաղաղ ծանրացած է ձեր ճակատուց վերայ . զի բարէ , այդ կանգնումն ներն վերականգնում չունին , մշանջենաւոր յաւիտենական դատապարտութիւն են ձեզ համար . այլևս ստիպուած էք անհետանալ այն փոսին մէջ , ուր ձգեց ձեր անխոհեմութիւնն . կարծէիք թէ երջանկութիւնն պիտի չնորհէր ձեզ վատթար սովորութիւն մի , մոլութիւն մի . պատիր թօթաբեր , որ վախճան տուաւ ձեր երջանկութեան , ընտանեկան զուարճութեանց :

Ս. յլևս կ'անցնի կ'անհետանայ այն կապոյտ հորիզոնն սլայծառ , և կը տիրէ գիշերային հորիզոնն թխաթոյր , այն որ կ'անցնի , մանկութեան , անմեղութեան զուարթ և խանդաղատալի հորիզոնն է լուսադեղ , ուր կը փայլէիք գեղածիծաղ , ձեր կուսութեամբ , հա-

մետաութեամբ և առաքինութեամբ , ձեր հոգւոյն եռակի ճառագայթներովն՝ որք կ'առաւելուին ձեր մարմնոյ գեղն հրապոյրն և շընորհն , ամենուրեք լոյս սփռէիք , ամենուրեք յարգ և մեծարանդ գտնէիք . իսկ այժմ վերջացաւ ամեն բան . ամեն ոք զձեզ կը թշնամանէ . լուսանք , հայհոյութիւնք կը ժայթքեն ձեր ճակտին , աներկիւզ , համարձակ կը թըրնեն ձեր երեսին . լոյսն կ'անհետանայ , խաւարն կը տիրէ , աղջամուղջք գիշերային կը դան պատել ձեր շուրջն . ահեղ ձեռք մի կը ծանրանայ ձեր խղճին վերայ , տակաւ առ տակաւ կը հեռանայ և մշուշի մէջ կը նշմարուի միայն ինչ որ կնոժ պատին է , այսինքն իւր առաքինութիւնն . ահ , այն ատեն զգալի կը լինի ձեր տխուր վիճակն , կ'զգայք թէ այլևս անհրնարին է զայն միւսանգամ ձեռք բերել . ի՛նչ կը լինիք յայնժամ , ո՞վ տառապեալ և լքեալ ողիք . ահա հասաւ ձեզ ժամ ողբոց և ցաւոց , ժամ սգոյ և լալեաց , հազար երանի ձեզ , եթէ անմուռնջ , գերմարդկային հանրատարութեամբ տկայիք այս տառապանաց և զրոյմամբ արտասուօք քաւէիք ձեր ոճիրն , սրբէիք այն արատն , զոր անողոք ընկերականութիւնն դրոշմեց ձեր ճակատուց վերայ . սակայն աւանդ , յայնժամ բողբոլին կը մերկանար ամօթոյ և պատկառանայ քօղն , կը նետէք զձեզ

անդուծ ընկերականութեան սառուցիչ, մահաբոյր գրկաց մէջ, անողորմ և անպատկառ երիտասարդութիւնն կը յարձակի բարոյապէս մեռեալ այդ դիակաց վերայ, և կ'սպաննէ Ֆիլիպպայէս. անտարբեր ոտնակոխ կ'ընէ այդ հեշտաբոյր ծաղկունքն, որ մարդկային ազգի գոյացութեան տարերքն կը կազմէին և կարէին շունչ տալ, կեանք տալ մարդկութեան. դուքա իրենց նման էակներ էին; և իրաւունք ունէին վայելելու երկնից պարգևն. սակայն որո՞ւ փոյթ, խստապահանջ են մարդիկ իրենց անհատական իրաւանց նկատմամբ, այլոց իրաւունքներն մանրագիտակով կը զննեն :

Մարդկային օրէնքներն կանոններն անպաշտպան կը թողուն այդ տկար, դիւրարեկ էակներն, որք ամենէն աւելի օրինաց պաշտպանութիւնն վայելելու իրաւունք ունին. միւս կողմէն անբարոյական վայրենեաց մի շղիբ համարձակ կ'այպանէ, կ'անդոսնէ, կը նախատէ, կ'սպաննէ, մին կ'անիծէ, միւսն մատնանիչ կ'ընէ բարձրագոյ, իսկ հեշտամուլ երիտասարդաց խումբն ԱՆՆՂՃԱՐԱՐ ԿԸ ՎԱՅՅԵԼԷ, յետոյ զինքն կ'արդարացնէ ասելով թէ «բնական օրէնք է» :

Որքան սոսկալի ես դու, ո՞վ մարդկային արդարութիւն, որպէս թէ բնական լինելով մարդս, բարոյական մի էակ լինելէ դադրած լինէր, և

իրեն համար գոյութիւն ունեցած չլինէին պատիւն, բարոյականի օրէնքներն. սակայն մարդկային օրէնքներն արտօնութիւն չնորհած են և կարեն համարձակ շրջիլ ընկերականութեան մէջ :

Գեղախալ Պարոններ, չնորհալի՛ կեղծաւորներ, սիրո՞ւն սրիկաներ, սրբ կը հրապուրեն և այդ ոճիրներուն մեղսակից կը լինին և յետոյ անբասրելի են, իրենց ստացուածքն կը նկատեն և դրամով կը գնեն իգական սեռին պատիւն, կեանքն, երջանկութիւնն և արիւնն :

Չէ՛ք սոսկար արդեօք, միւրեալ կանայք, ձեր թշուառ վիճակէն, և չէ՛ք մտածեր ձեր ապագային վերայ. երբ կ'անցնի առոյգ հասակն. չնորհն, դեղն, հրապոյրն կը թառամի և զազիր հիւանդութեան ճարակ կը լինիք. աչերն իրենց խռոչներուն մէջ կ'ընկզմին, ծրնգերն կը կլթոտին, և դիմաց վերայ շատ կանուխ կ'սկսին տիրել ծերութեան խորչումներն. ո՞հ, այն ատեն կ'ուղէք ձեր բոլոր կեանքն տալ և փոխարէն ժառանգել առաքինի պատուաւոր կնոջ անունն. բայց 'ի զս՛ր, ձեր երիտասարդ, ծաղիկ հասակին մէջ լուսագոյն համարեցաք պճնիլ, զարգարիլ, որոյ մորմոքելի հետեանքներն կրեցիք. այժմ պիտի զգե՞նուք սգոյ զգեստն, և պիտի ողբաք ձեր ճակատագրին վերայ, զոր դո՛ւք չինեցիք :

Եթէ գլխամաք քաւէք ձեր ոճիրը , ս՛վ պիտի գլթայ և ներէ ձեզ, թշուա՛ւ կանայք , — թերևս Աստուած . այլ ե՛րբ և ս՛ւր պիտի գրանէք ձեր տառապանաց վախճանն և հանգիստն — աւանդ , գերեզմանի մէջ միայն :



ԳԼՈՒԽ ԺԷ.

Այսպէս , ահա , Հայուհիք , աստիճանաբար մի մուշտիւն շատ մի մուշտեանց առաջնորդն կը լինի , ֆիզիքական , նիւթական . բարոյական զոհերով կը ընու զաշխարհ :

Բազմաթիւ ընտանիքներ , որք համեստ չափաւոր դիրք մի ունէին , այսօր նիւթապէս անկեալ վիճակ մի ստացած են կնոջ պճնասիրութեան , առանին շուայլ կենաց հետեւողութեամբ . բազմաթիւ ընտանիքներ , որք բարոյսպէս մի բարձր համարում կը վայելէին , իրենց նիւթապէս անկամայն , բարոյսպէս ալ անկեալ են . կնոջ անասհման պահանջողութիւնն , ամուսնոց բաժանման , և այդ բաժանումներն խիստ շատ անգամ կնոջ անկուսն յառաջ կը բերեն . իրենց զաւակներն կը մնան որք և աննեցուկ . ծնողաց անասնձ կրից , մուշտեան զոհ կ'երթան , իրենց մատղաշ հասակի մէջ կ'սկսին ուսանիլ վէճ , կռիւ , հայհոյանք . կ'եղծանին բարոյսպէս , և իրենց ծնողաց պատճառաւ սոսկաշի ճակատագրի մի կը վիճակին այդ դժբաղդ արարածներն :

Աւելորդ է ըսել թէ ոչ նուազ կը նպաստեն այս անկման , այն սինդրոք մարդկանց խումբն որք անընդհատ կը քաջալերեն կնոջ այն վնասարեք հաճոյքներն , նորատի կայտառ երի-

տասարդաց գեղեցիկ օրինակներ ընծայելով-
իրենց մուր ակզբունքներն կ'ուսուցանեն և
կը գլորեն ապականութեան տղմին մէջ :

Այն անփորձ երիտասարդներն մէկ կողմա-
նէ կը տեսնեն , կը հաշուեն ընտանիք կազմե-
լոյ դժուարութիւններն , զորս կանանց շքա-
սիրութիւնն , պճնասիրութիւնն կը յարուցա-
նեն օր ըստ օրէ և ընտանեաց ծախքերն կը
բարդեն , մինչդեռ համեմատաբար շահերն կը
նուազին . և միւս կողմանէ կը տեսնեն անթիւ
ասպարէզներ , անբաւ դիւրութիւններ որովք
կարեն իրենց կիրքն յագեցնել և բնական օ-
րէնքներն գոհացնել , սոքա ևս քաջալերեալ կը
նետուին անպատիւ մարդոց դասուն մէջ , կը
համակերպին նոցա բարուց և կ'սկսին այնու-
հետև ուսանիլ , թէ ի՞նչպէս կրնան կին մի հրա-
պուրել , ընտանիք մի կործանել :

Այս կարգի պարոններն կը սրբեն բարո-
յական օրէնքներն , և կը լինին անբարոյական
անհատներ : Իրենց համար ամուսնութիւնն լոկ
մարմնոյ պէտք մի է և ոչինչ աւելի . կը կար-
ծեն թէ կրնան այնու երջանիկ լինիլ երբ բնա-
կան պէտքերով գոհանալ բաւական համարին :

Քանի՛ մեծ է իրենց սխալն , սակայն աւա՛ղ
չատ ոչ կ'զգան զայս . իրենց հասակին բնա-
կան եռանդով կը վազեն անխորհուրդ , խոհե-
մութեան և չափաւորութեան սանձերն խոր-

տակելով , առաքինի հօր և մօր խրատուց
հետեւելով կ'սկսին ցոփակեաց ապրիլ . դա-
շանական վայրագ կրիւք կը մաշեցնեն իրենց
կեանքն , արբեցութեամբ , շուայութեամբ կը
մոխեն իրենց դրամներն , հայրական ժառան-
գութիւնն յուճկէտս կը վատնեն , ծնողաց
պատուհասն կը լինին , կը կործանեն ընտան-
եաց հարստութիւնն :

Ընկերականութեան ժանտախտն են այս պա-
րոններն . այլ ևս մարած է իրենց սրտին մէջ
մարդկութեան , ազգութեան , հայրենեաց սէրն
զի նա՛ որ ընտանեաց , ամուսնական կենաց
սէրն չ'զգար , չ'կրնար աչգասէր , մարդասէր
ըլլայ :

Սոքա անձնասպաններ են , զի կը հիւժեն կը
մաշեցնեն իրենց մարմինն . դունաթափ , նի-
հար , անզօր կերպարան մի կ'առնուն . գերեզ-
մաններէ փախած կմախներո՛ւ կը նմանին : Ա-
հա արդի երիտասարդութեան ընդհանուր
տիպարն . ի՛նչ պիտի ըլլայ իրենց պտուղն , ի-
րենց ապագայ զաւակաց վիճակն , եթէ եր-
բէք ամուսնական կենաց շրջանին մէջ մոռնեն .
իրենց հաշմութիւնն պիտի փոխանցեն զաւա-
կաց , նոցա կեանքն պիտի դառնացնեն , ինչ-
պէս նաև իրենց կնոջ . միթէ պիտի կրնա՞ն գո-
նէ իրենց կինն երջանիկ ընել , անհնարին բան .
զի նա՛ որ անկեալ է ֆիզիքապէս , բարոյա-

պէս զիւր կինն չ'զոհայնելոյ դժբաղդութեան մէջ պիտի գանուի :

Ահաւասիկ մի նոր պատճառ , որ ամուսմունսութեան հրապոյրն և քաղցր հաճոյքն կը բառնայ , և նոր թշուառութիւն մի կը պատրաստէ ամուլից :

Արդ՝ հարցուցէ՛ք միանգամ այդ երիտասարդաց թէ ի՞նչ պատճառաւ չ'են ամուսնանար , խկոյն պիտի պատասխանեն , « կինն , պճնասէր է , շուայլ է , չ'եմք կարող զայն գոհայնել սակաւապետութեամբ ապրելով և այլն » . ստախօսներ , զրպարտիչներ , իրենց հաճոյից , ցոփակեաց վարուց համար մեծամեծ գումարներ կը վառնեն , որովք կրնային մի քանի ընտանիք ապրեցնել . սակայն իրենց ընթացքն արդարայնելոյ համար , զձեզ պատճառ ցոյց կը տան պճնասէ՛ր Տիկնայք , բայց մի քանի մասամբ ճշմարիտ է թէ , ձեր պճնասիրութեան օրինակին հետեւելով , նորա ևս շուայլութեան , շքասիրութեան կը վարժուին , ազնուականութեան , հարստութեան հաշիւներ իրենց աչերն կը հրապուրեն :

Ուստի յանուն մարդկութեան , յանուն երիտասարդութեան , Տիկնայք , վերջ տուէ՛ք այս մուլութեան որ ընկերականութեան , ընտանեաց վերայ ծանրացող մեծ դժբաղդութիւն մի եղաւ . այն ատեն մարդկութիւնը ,

երիտասարդութիւնը ձեզ երախտապարտ պիտի ըլլայ , ընտանիքներն ապականութիւններէ մուլութիւններէ պիտի փրկէք , ամուսնական կենաց խոչնդոտներն պիտի տապալէք , ամուսնական ուզին պիտի յարդարէք , ուր յօժարակամ պիտի նետուին երիտասարդք և այսուիրենց սկզբնական հասակէն պիտի սկսին աշխատութեան վարժուիլ , ինայտոյութեան վարուիլ , իրենց ընտանիքն անուցանելոյ համար . յառաջդիմութեան խթան մի պիտի լինի իրենց ամուսնութիւնն . որով պիտի պահէք պահպանէք երիտասարդութիւնն ֆիզիքական , բարոյական , նիւթական անկումներէ :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Մտածեցէք, Հայուհիք, թէ սրջափ կը նուաստանայ ամուսնութեան սրբազան խորհուրդն, երբ զանազան շահախնդրութեանց, անկալութեանց իբր միջոց կը գործադրուի. եթէ արք յանձն կ'առնուն այս սարկութիւնն, չեն ինչ զարմանք, զի նոքա առուտուրի մարդեն, վաճառական են. այնչտփ մեծ համարում չունին զգացումներու վերայ, ազնուականուականութեան տիտղոսներ, բարձ, աւագութիւնք, հարստութիւնք աւելի բարձր արժէք ունին իրենց համար. եթէ ամուսնական կենաց մէջ դժգոհութիւն զգան, կարեն շատ մի միջոցներու գիմել, իրենց համար ասպարէզները բաց են, վարչական օրինաց առաջ կըրնան արդարանալ, նոքա ձեր գատաւորներն են. սակայն դուք կը տուժէք անբուժելի դժբաղդ ճակատագրի մի կը գատապարտուիք, եթէ փոքր ինչ անխոհեմութիւն գործէք, եթէ այս տեսակ շլացուցիչ իրերն ձեր փառասիրութիւնն գգուեն. դուք գաղափարականին սիրահար էք, և այսու կը գերազանցէք զարա, յարզանք, համարում, պատկառանք, սէր կը ներշնչէք. բայց ց'որչափ այս մուլութիւնն որոյ զոհերն կը նկարագրենք, պճնասիրութիւնն ընդհանրացաւ և արմատացաւ ձեր սրբ-

տերու մէջ. դուք ալ գահավէժ ինկած էք ձեր բարձրութենէն, դուք ալ կը խոնարհիք մետաղին առաջ, և ազնուականութեան կամ հարստութեան կը զոհէք ձեր երջանկութիւնն, և ամուսնական կենաց համար ձեզ թշուառութիւն կը պատրաստէք:

Անժխտելի իրողութիւն մի է՝ որ ամեն բանէ առաջ ամուսնական հանգամանաց մէջ նիւթականն կը վնասուի. այն մարդն՝ որ նիւթական բարձր վիճակ մի ունի, նախամեծար կ'ընտրուի քան զայն, որ թէ և ոչ այնքան լաւ նիւթական վիճակ մի ունեցած է, բայց իւր բարոյական, մտաւորական արժանեօք դեր ՚ի վերոյ է և անհասկեմատ գերազանցութիւն մի ունի, պատուաւոր մի երկտասարդ, թերևս տաղանդի, արժանեաց տէր, մեծ և բարձր ձիրքերով օժտեալ, որ կրնար զիւր կիներ երջանիկ ընել, բարեկարգ ընտանիք մի կազմել. բայց այսպիսի նիւթապաշտ դարու մէջ բարոյական, մտաւորական հանգամանքներն ինչ արժանիք կրնան ունենալ. բայց սա ևս անուրանալի է որ, անհատին նիւթական կացութիւնն իսկ բարոյական մտաւորական արժանիքէն կախումն ունի. ճարտարամիտ, կուրովամիտ, բարեկիրթ, բարոյականի տէր անձն ինչ վիճակի մէջ ալ ըլլայ, նիւթականը կ'ըստեղծէ, և զիւր կիներ երջանիկ ընելու, ընտան-

եայ բարեկեցութեանն համար ամեն ինչ կը
դռնէ . կնոջ երջանկութեան մէջ կ'որոնէ իւր
զուարթութիւնն :

Քանի՛ անհամեմատ սուաւերութիւն ունի
այս անձն , այն ազնուական հարուստէն , որ
իւր հայրական ժառանգութեան վտահա-
ցած է , իւր աշխատութեամբ , քրտամբ չ'է
գոյացուցած այդ հարստութիւնն , մեղկ կեանք
մի անցուցած և թերեւս — խիստ շատ անգամ
— զրկուած բնութեան շնորհներէն , անմիա ,
անխիղճ , անսիրտ , անզգայ մի էակ , որ սէրն
կը դորձած է իւր գրպանին մէջ գտնուած դը-
րամներուն պէս , զեղխութեամբ , ցոփութեամբ
մաշեցուցած է իւր կեանքն . բայց և այնպէս
կրնայ գրամով կանանց պճնասիրութիւնը քա-
ջայերել , գոհացնել . և այս բաւ է կանանց
համակրութիւնն գրաւել և արժանիք ստա-
նալ : Նաև այն ալեւոր ծերունիներն , այն զա-
ռամեալ պարոններն , ոյց խորշումեալ ձեռ-
ներն կրնան տակաւին երիասարգուհւոյ մի
ձեռնն սեղմել , և իրենց սառուցիկ շրթանց վե-
րայ տակաւին կրնան ընդունիլ Ստողկան պար-
գեւն . վասն զի իրենց հարստութեամբն կըր-
նան գոհացնել կնոջ պճնասիրութիւնն :

Եթէ չ'էք զգայր ձեր դժբաղգտութիւնն ,
պճնասէ՛ր Տիկնայք , ուրեմն անզգայ էք ,
իսկ եթէ կ'զգար , սրբան թեթեամիտ էք ե-

զեր , որ ձեր երիտասարդութեան գեղն , բոյրն ,
ժաղիկն կը նետէք սառերու մէջ և ապա կ'ող-
բաք ձեր ճակատադրին վերայ :

Բայց երբեմն անպարտ էք դուք , զի շատ
անգամ , հին միջնադարեան սովորութեանց
համեմատ , ծնողաց ձեռօք կը կատարուին ըն-
տրութիւնք , այն Տիկնանց ձեռօք՝ որք երջան-
կութիւնն հարստութեան մէջ կ'ըմբռնեն և
անպատշաճ ամուսնութեանց կը ձեռնարկեն
աղջկանց պճնասիրութիւնն գոհացնելոյ հա-
մար . որով շատ անգամ ընտանեաց կործան-
ման , ապօրինի ամուսնութեանց , կարգ մի
մալութեանց տեղի կը տան , կ'սպաննեն իրենց
զաւակունքն բարոյապէս , իրենց ձեռներն նոցա
անմեղ արեան մէջ կը թաթախեն . բայց և այն-
պէս շատ բարեպաշտ , ջերմեռանդ են այս
Տիկնաներն , հեռաւոր եկեղեցիներ ուխտի կ'եր-
թան , համբիշն , սաղման ձեռքէ չ'են թողուր :

Եթէ դուք պճնասիրութեան վերջ տար .
Տիկնայք , այն ատեն , բարոյական , մտաւո-
րական հանգամանքներն արժանիք պիտի բու-
տանան , այն աստի՛ն մեծ գեղեցիկ սկզբունք
մի կիրաւութեան մէջ պիտի գրուի : Հա-
րուստ , ազնուական և ազբատ բարեկիրթ ,
ճարտարամիտ , ուսեալ գասուց միջև — որք
արդէն աննշան բացառութիւն մի են — նոր
կապ մի պիտի հաստատուի :

Այնայ այս գաղափարն չարամիտ ենթադրութեանց տեղի տալ . բայց հոգ չէ , բաւական է որ օգտակար է առողջարանական, նիւթական և բարոյական տեսութեամբ քննելով : Աչ միայն ընդհանրութեան , այլ նաև ընտանեաց :

Նախապէս հարստութեան աղբիւրներն կ'աճին , առողջ , հանճարամիտ երիտասարդաց ձեռօք . ճարտարութիւնք , արհեստ և այլն ուղի կ'առնուն . հարուստ ընտանեաց թիւն կը բազմապատկի , որք այժմ խիստ փոքրամասնութիւն մի կը կազմեն , որով Ազգն ալ զերծ կը մնայ այն վտանգներէն , որոց ենթակայ են այն ազգերն կամ տէրութիւններն յորս ընկերականութիւնն այսպէս իւր հաւասարակշռութիւնն կորուսած է , մէկ կողմն հարստութիւնն թողլով , իսկ միւս կողմն աղքատութիւնն ու թշուառութիւնն :

Երկրորդապէս ամուսնոց համար , զի մին զգալով թէ միւսին հարստութեանն կը պարտի իւր երջանկութիւնն , շնորհապարտ զգացմամբ պիտի արժարժի իւր սիրտն , և պիտի ջանայ զայն գոհացնել , պիտի գուրգուրայ նորա վերայ . իւր հոգւոյն զգացմանց հեղեղն պիտի թափէ սրտին մէջ . փոխադարձ գոհունակութեամբ , արբշուութեամբ պիտի վայելեն իրենց սէրն , երջանիկ պիտի լինին , և պիտի ազատին

այն ֆիզիքական , բարոյական շատ մի պատճառներէն , որք ամուսնութեան հաճոյքներն կը թունաւորեն , և ամուլից դժբաղդութիւնն յառաջ կը բերեն :

Պճնաժիրութեան յարուցած դժուարութեանց և անկից հեռեկիւր մոլութեանց պատճառաւ բարբերն ապականեցաւ, ամուսնութեանց թիւն հետզհետէ նուազեցաւ, ամուսնաց թիւն բազմապատկեցաւ :

Կատարեալ վիճակագրութիւն մի պէտք է այս ճշմարտութիւնն հաստատելոյ համար. բայց դժբաղդարար այդ վիճակագրութիւնն ստանալոյ միջոցներէն զուրկ էինք. միայն վերջի 16 տարուան Պօլսոյ մէջ եղած ամուսնութեանց թիւն կը նշանակենք հոս, Ս. զգ. Պատրիարքարանի պաշտօնական տետրէն քաղելով, առանց կատարեալ ճշգրութիւնն երաշխաւորելու :

1861—1879

1864	տարուան մէջ ամուսնութեանց թիւն	689
1865	» » » »	651
1866	» » » »	705
1867	» » » »	647
1868	» » » »	588
1869	» » » »	507
1870	» » » »	517
1871	» » » »	524
1872	» » » »	560

1873	տարուան մէջ ամուսնութեանց թիւն	535
1874	» » » »	530
1875	» » » »	505
1876	» » » »	490
1877	» » » »	450
1878	» » » »	399
1879	» » » »	387

Միւս կողմանէ պէտք է դիտել Պօլսոյ գաղթականութեան հետզհետէ աւելնալն, այն ասան զգալի տարբերութիւն մի յառաջ կը դայ :

Արգ՝ ի՞նչ կը լինի Ս. զգին վիճակն, որ ընտանեաց վիճակէն կախումն ունի. երբ գաւառացի բազմութիւ ազգայինք քաղաքական արտաքին և ներքին հանրածանօթ պատճառներով, կ'ստիպուին ընտանեկան կեանքէ զրկուիլ և օտար երկիրներ գաղթել, մինչդեռ թերի քաղաքակրթութեան մէջ եղած այս և ասոնց նման մոլութիւնք ընտանեկան կեանքն կը դժուարացնեն, ընտանեաց կազմութիւնն կը նուազեցնեն :

Բայց արտաքին պատճառներու բարձման համար անընդհատ բարձրագոյ կ'աղաղակեմք, իսկ ներքին բարենորոգմանց համար բնաւ ճիգ և աշխատութիւն չեմք տանիր, որով մոլութիւնք այն աստիճան կ'աճին և կ'արմատանան

որք իբր սկզբունք տարածում կը դռնեն և բընական օրէնքներն բարոյականէն կ'անջախն :

Ինչ այլանդակ գաղափարներ, հրէշային մտածումներ ծնունդ կ'առնուն . մին կ'ուզէ ամուսնութեան սրբութիւնն եղծանել, իսկ միւսն Ս. պահարզանի դրութիւն հաստատել . զայս կ'ուզէի ակնարկել, երբ մի օր այս նիւթիս վերայ խօսելով կ'ըսէի « ամբարիշտ վարդապետութիւնք, ապերտան համարձակութեամբ կը ծաւային » : *

Ասպի՛ մարդ, երբ կը տեսնէ բարոյական խնաստասէրներ, օտարազգի հմուտ գրագէտներ, որք Ս. պահարզանի դրութիւնն կը պաշտպանեն, իբր միջոց փրկութեան այն պատճառներէն, որք ամուլից դժբաղդութիւն կ'առնեն, այլ այդ բնական և բարոյական պատճառներն որպէս ցոյց տուինք, մուլութեանց արդասիքն են, փոխանակ արդեանց վերայ խորհելու . լաւագոյն չէ պատճառներն բառնալ, անհետացնել մուլութիւններն, բնական և բարոյական աւերումներն, որով ինքնին կ'անհետանան ամուսնութեան մէջ պատահած դժբաղդութիւններն . աւելի մեծ չարիք մի չէ ընդունիլ այդ մուլար վարդապետութիւնն, որն որ ահագին ասպարէզ մի կը բանայ հեշտա-

մոնքերու առաջ, ուր կրնան աւելի համարձակ գոհայնել իրենց կոշտ հաճոյքն, քանի որ օրէնքն կը թոյլատրէ և կը վաւերացնէ սկզբունքն, բարէ, այն ատեն ինչ կը լինի ընտանեաց վիճակն, ընկերականութեան վիճակն :

Սոսկալով մերժեցէք, Հայուհիք, այս մտածումներն որք նախապէս զձեզ կը հարուածեն, դիտցէք որ ամուսնութեան սրբութեան մէջ միայն կրնայ կինն, իւր պատիւն պահպանել . առաքինութեան, համեստութեան, առմիակ ոյրն ունեցած հաւատարմութեան մէջ կրնայ գտնել զիւր երջանկութիւնն :

Նայուածք մի արձակեցէք ձեր շուրջն և տեսէք թէ ինչ կը խորհի ձեր վերայ ամբօխն . ձեր թերութիւններէն մուլութիւններէն օգուտ քաղել կ'ուզէ . ինչ դարման տանիլ կը խորհիք այս չարիքներն բուժելոյ համար, շատերն 'ի ձէնջ կը նման, և չեն գործեր երբէք փարատելու համար աղիտութեան խաւարն, որով կուրաբար առաջնորդուեցան, անկան մուլութեան մի մէջ, պճնասիրութեան գիրկն՝ որ վերոյիշեալ դժբաղդութեանց գլխաւոր պատճառն է, որ շղթայած է իրենց միտքն դձձութեան մէջ, մուցուցած իրենց անհատական ընտանեկան, հանրական պաշտիքն, բիրտ, անարդ մտածումներով բեռնաւորած միտքն, որով կինն կ'իջնէ հետզհետէ իւր արժանա-

* Թէրճէ մանր էջքետ 1879 Օգոստոս 6 :

պատուութենէն , կ'իջնէ այն բարձրութենէն
ուր դրած է Նախախնամութիւնն կնոջ պատիւն :

Բայց բարեբաղդաբար ողջախոհ , լուսամիտ
յառաջդիմասէր Տիկնայք և Օրիորդք , հեռա-
տեսութեամբ , խոհականութեամբ կրցին հաս-
կանալ այս մտութեան վախճանն և գործած
բիւրատր զոհերն , ԱՅրդ դարու լուսաւորու-
թեամբ կազմեցին միութիւն մի , պարզասիրու-
թիւնն տարածելու համար , իգական սեռին
միտքն , սին ու սնտտի մտածումներէ ազատե-
լով՝ գիտութեամբ բարձրացնելու և իրենց պար-
տուց , կոչման արժանալայել գրից մէջ դնե-
լոյ համար :

Այս գեղեցիկ և վեհ նպատակն , ԱՅրդ դա-
րու Հայ իգական սեռին լուսաւորութեան
պայծառ ապացոյցն է , որ արդիւնաւորուելով ,
պիտի յեղափոխէ՝ ընտանեաց բարքն , երիտա-
սարգաց վիճակն դէպ 'ի բարին , պիտի անհե-
տացնէ՝ մտութիւններն զորս նկարագրեցինք
համառօտիւ . պիտի բարձրացնէ՝ իգական սե-
ռին փառւն , առաջնորդելով իւր քայլերն դէպ
'ի ճշմարիտ քաղաքակրթութիւն :



Բա՛ւ է այլ ևս , Հայուհի՛ք , որչափ վշտա-
կրեցաք , չարչարուեցաք , թերի քաղաքակրթ-
ութեան յառաջ բերած մտութեամբ . բա՛ւ
է այլ ևս որչափ տառապեցաւ երիտասարդու-
թիւնն , բա՛ւ են այլ ևս Ագգիւն , հայրենեաց
տուած զոհերն . սոքա ամենքն ձեր համարիւն
բորքն և եղբարքն են , պէտք է զթաք ասոնց
վերայ :

Ետեւերն 'ի ձէնջ կ'անիծեն այս վատթար սու-
վորութիւնն որ իրենց դժբաղդութեան ծնունդ-
տուած է , և իրենք ակամայ ստիպուած են
հետեւիլ այս սովորութեան այլոց ծաղրէն խու-
սափելու համար . այս կերպով ոչ իրենց գան-
գաններն և ո՛չ անէծքներն կրնան եղած չա-
րիքն դարմանել և այս մտութեան վախճան
տալ :

Անէ՛ծ՝ԲԸ , ՏԿԱՐԱՑ ԶԷՆՔՆ Է :

Աթափեցէ՛ք այլ ևս Հայուհի՛ք , և միու-
թեամբ գործեցէ՛ք , նախապէս զձեզ օրինակ
ցոյց տալով աշխարհի . սնտեսագէ՛տ , խնա-
յո՛ղ , պարզասէ՛ր հանդիսացէ՛ք , միացէ՛ք , որ-
պէս զի կարենաք տակալ դժուարութեանց և
տապալել այն ամեն խօշնդոտներն , որք բնա-
կանաբար յառաջ կը գան , երբ մի նոր ձեռ-
նարկ կ'սկսի քայլափոխ առնուլ :

Ահաւասիկ մի նոր ասպարէզ . ձեր գործու-
նէութեան , գթութեան , առաքինութեան ա-
պացոյցն ընծայելու , հասկացնելու աշխարհի
թէ Հայ իգական սեռն նախամեծար կ'ընտրէ
մտքի լուսաւորութիւնն , սրտի կրթութիւնն
քան այն պերճանքն , արտաքին զարդերն ,
որք մտաց լոյսն կը խաւարեցնեն , ընտանիք-
ներն կը կործանեն , երիտասարդութիւնն կ'ըս-
պանեն , կնոջ պատիւն կ'արատաւորեն . ցոյց
տուէք աշխարհի , թէ դուք նախանձախնդիր
էք ձեր պատւոյն , և թէ ընկերականութեան
ձեզ դէմ ըրած նախատանաց , թշնամանաց
չէք կրնար անտարբեր մնալ : Հարուստ ազ-
նուատո՛հմ Տիկնայք , աջակցեցէք այս միու-
թեան , զի միայն ձեր աջակցութիւնն կրնայ
արդիւնաւորել այս վեհ նպատակն , գեղեցիկ
միութիւնն . հասարակաց ակումբներու մէջ կը
փայլիք , ձեր զարդերն կ'սքանչացնեն , դուք
ձեզ համակերպելու կ'ստիպէք զամենքն . ար-
գարասէ՛ր եղիք , խոստովանեցէք անկեղծա-
բար թէ դուք եղած էք առաջին անգամ , որ
այս մուլութեան մուտ տուած էք ընտանեաց
մէջ , և պճնասիրութիւնն տարածած էք Հայ
իգական սեռին մէջ , շուայրութեան օրինակ
տուած էք ընտանեաց . որով նիւթապէս , բա-
րոյսպէս անկմանց պատասխանատու էք յա-
ւէտ . եթէ տգիտութեամբ , անխոհեմութեամբ

անհեռատեսութեամբ տեղի տուիք այս մուլ-
թեան , ժա՛մ է արդ , որ ձեր ստացած լուսաւո-
րութեամբ , մտքի կրթութեամբ աշխատիք , և
արմատախիլ ընէք ընտանեաց մէջէն . մի՛ կար-
ծէք բնաւ թէ , ձեր դրամին զօրութեամբ կա-
րէք զերծ մնալ այս անկումներէն . եթէ ձեր
մտածումն լոկ ձեր վերայ կեդրոնացնէք և փա-
կէք ձեր գթութեան աղբիւրն հանրային զո-
հերու և թշուառութեան առաջ , և քաջալե-
րէք այս մուլութիւններն , այն ատեն ընկերա-
կանութիւնն կ'ապականի , բարոյական օրէնք-
ներն բնականէն կ'անջատին , դուք ալ կը կու-
րուսէք ձեր արժանիքն , այն վեհ պաշտօնն
զոր նախախնամութիւնն շնորհած է ձեզ որով
միայն կարող էք մլել զմարդն դէպ յիւր կա-
տարելութիւնն , պահել ձեր պատիւն , ազա-
տութիւնն , գերիշխանութիւնն :

Լա՛ւ նկատեցէք իրաց բնական ընթացքն ,
մի քանիներու զեղծումներն հետզհետէ կը ծա-
ւային և կը դան ծանրանալ ընդհանրութեան
վերայ , ամբողջ իգական սեռին արժանապատ-
ուութեան դէմ կը դայ հարուածն :

Այս պատճառաւ է որ կինն մեծ արժանիք
մի չունի գրեթէ , և կոչտ տմարդի զգացմանց
առարկայ մի կը նկատուի :

Երբ ակումբի , կամ ընկերակցութեան մի
մէջ խօսքն իգական սեռին վերայ կը դառնայ ,

յանկարծ խօսակցութիւնք զուարճական ձև մի կ'առնուն , և լրբենի կատակք կը դան յաջորդել լրջամիտ և օգտակար խօսակցութեանց . բարէ , մինչդեռ սուրբ և ազնիւ զգացումներ պէտք էր ներշնչել այդ անունն , առաքինութեամբ , պարկեշտութեամբ համակէր զամենքն . ահա այսքան զգալի եղած է կնոջ արժանապատուութեան անկումն :

Հայուհիք , նախանձախնդի՛ր եղիք ձեր պատւոյն , պաշտեցէ՛ք , պաշտպանեցէ՛ք ձեր պատիւն :

ՊՍՏԻԻՆ , ԱՆՀԱՒԱՏԻՑ ԿՐՕ՛ՆՔՆ Է :

Գաւանեցէ՛ք այս կրօնքն , որ համաձայն է լուրր կրօնից վարդապետութեանց , որք բարոյական բարձրացնելու և խղճի օրէնքն ազատութիւնն շնորհելու պաշտօնն ունին :

Առանց բարոյականի պատիւ չկայ :

Բարձրացուցէ՛ք ձեր պատիւն , և այն ատեն պիտի զգար մտքի լուսաւորութեան պէտքն . աշխարհի սին ու մնտաի զարգուց անկարևորութիւնն , շոայլ ծախուց ֆլաններն , ձեր զաւակաց եղբարց կրթութեան պէտքն , ընտանեկան դաստիարակութեան հարկն , ընտանեաց կազմութեան օգուտներն , պիտի զգար որբերն թշուառներն միտիթարելու ձեր նուիրական պարտն , յայնժամ պիտի առաքինանաք , աւելի՛ դեղեցիկ , աւելի՛ վեհ , ձեր կոչ-

ման և պատույն արժանավայել զբաղումներ պիտի ունենաք , պիտի անհետանան մոլութիւնք պիտի աճի երջանիկ ընտանեաց թիւն . . . ո՛հ այն ատեն կերպարանափոխ պիտի լինի աշխարհ :

Միացէ՛ք , Հայուհիք , այս մեծ գործն ՚ի գլուխ հանելու համար . ահաասիկ ինչ որ ձեր երջանկութիւնն , ապագայն ձեզմէ կը պահանջէ . ՚ի բաց մերժեցէք ամեն սնձնական նկատումներ , հանրային օգուտն ձեզ նպատակ դրէք , խե՛ռ , ատելութիւն , թշնամութիւն չ՛դա՛ն ապականել , կործանել ձեր սրբազան միութիւնն . ուժգնակի յառաջացէ՛ք , առ ոչինչ գրեւով ստորին գձուձ մարդոց վայրահաջումներն :

Խլուրդներ են նորա . որք կ'ապրին խաւարային փոսերու մէջ և չ՛գիտեն թէ ինչեր կը գործուին մթնոլորտին բարձրագոյն խաւերու մէջ . յարատուութեամբ , քաջասրտութեամբ գործեցէք :

Ամեն մեծ գործ ծաղրով , ծիծաղով կ'սկսի և յաջողութեամբ կը վերջանայ :

Այո՛ , մարդկութիւնն ստէպ ապերախտ գտնուած է , և արհամարհած է զանոնք , որք իրեն բարերարներն հանդիսացած են :

Այլ դուք զթալիր մի ժպիտ , գորովական ակնարկ մի արձակեցէք նոցա վերայ , զի տղի-

տութեամբ կը գործեն, և շարունակեցէ՛ք ձեր
գործն . ազնուացուցէ՛ք, բարձրացուցէ՛ք ձեր
միտքն ուսմամբ, գիտութեամբ և յառաջա-
ցէ՛ք գէպ ՚ի լուսաւորութիւն, որպէս զի Ազգն
յառաջանայ գէպ ՚ի լոյս և ՚ի քաղաքակրթու-
թիւն .

ՉԻ

ԿԻՆՈՂ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒ-
ԹԻԻՆՆ Է :



«Ազգային գրադարան»



NL0247723

